



Ս.ԱՐՈՒՅՅԱՆ 15

ՀՐԱՏ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՈԳՐԻ ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԵԻ
ՑԵՐԵՎԱՆ. 1926

4
went down

Պրովետարներ բոլոր յերկրների, սկսածից

Ա. ՄԱՐՏԻ


9(44)
Ն

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՆՏԵՐՈՒՄ

π
23248

A
Հարգելի իմացատր,
Կարգի խնդրով,
Հ. Բ.

№ 2



ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 208 բ.

Պատվեր 356

Տիրաժ 3000

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆՆԵՐԸ»
ՍՊԻՏԱԿ ՍՏՐՈՒԿՆԵՐԸ

... Լուսանում է: Յերկաթուղու պայծառ լուսավորված կայարանում հանկարծ մի խումբ մարդիկ են լցվում: Միմյանց հետ ձեռնաշղթաներով շղթայված, յեղեքտրական պայծառ լուսով լուսավորված, շվարած, ուհարեկված, առաջ են շարժվում նրանք՝ ցավ պատճառելով միմյանց իրենց անկարգ, անշնորհ շարժումներով: Վոմանք կեղտոտ ցնցոտիներով են, վոմանք մաշված «նորածե» հազուստով, իսկ մեծ մասը՝ հին, գույնը տված զինվորական համազգեստով: Նրանց շրջապատել են «իշխանության ներկայացուցիչները», այսինքն՝ մարդիկ, վորոնց իրենց մերձավորների կյանքին ու մահը տնորինելու իրավունք է տված—միշտ բարկացած, միշտ քրթմնջող: Կալանավորներ են: Նրանց քշում են դեպի կալանավորների վագոնը, վոր նրանց պիտի տանե կենտրոնական բանտը, այն «տունը», վորտեղ նրանց ավելի դաժան շահագործումն է ապաստում, քան այն, վորին գրաստներն են յենթարկվում: Վորտեղ նրանք հաբստացման աղբյուր պիտի լինեն խոշոր արդյունաբերողների, միլիոնատերների համար, վորոնք միշտ աշխատող ձեռքերի կարիք ունեն հախարարությունից շարունակ նոր դատապարտյալներ են սրահանջում մեռածներին և սակավաթիվ կենդանի մնացածներին ու ազատություն ստացածներին փոխարինելու համար...

Կալանավորների վագոններ: Տանջանքի ահուկ

գործիք: Այդ վագոններով տեղափոխվել են «մեծ» պատերազմին մասնակցող հազարավոր զժքախա զինվորներ, վորոնք մի քանի տարվա խակապես վոր մղձավանջային կյանքից հետո՝ մի բախտավոր պատահականության շնորհիվ ազատ են մնացել զնդակահարությունից և կարծել են, թե իրենց կյանքը փրկված է, վոր բանա են նստացրել իրենց: Վագոնի ամբողջ յերկարությամբ շինված են յեռակի փականքներով փակվող մի շարք արկղներ, յուրաքանչյուր այդպիսի բաժանմունքի բարձրությունն ու լայնությունը համապատասխանում է մարդու մարմնի միջին չափերին. մի նեղ տախտակ նստելու համար. ողը ներս է թափանցում մի շատ փոքրիկ ողանցքից, վոր դուրս է գալիս դեպի վագոնի միջանցքը, իսկ վագոնի հատակին ամրացրած է մի ծանր շղթա, վորով շղթայվում են կալանավորի վրտները:

Յեվ այսպիսի տեղերում ստիպված են լինում յերբեմն չորս-հինգ որ անցկացնել: Կերակուրը-որական յերկու անգամ մի-մի փոքր կտոր յերչիկ, 20 գրամ պանիր, 300 գրամ հաց և մի գավաթ ջուր. յերբեմն, յեթե բարե վերակացու յե պատահում, կարելի յե հավելումն ստանալ... յերկու կամ յերեք գավաթ ջուր, բայց այս քիչ է պատահում: Այսպիսի ռեժիմի հետևանքով կալանավորը անտանելի տոթի կամ սոսկալի ցրտի ազդեցության տակ վայր է ընկնում դալկացած կամ կուչ է գալիս ու դողդողում. և առաջ է գալիս մի զարհուրելի, տենդային ծարավ: Ամենքը ջուր են աղերսում:

Այս բոլորն արվում է մեզ տառապանքների ընտելացնելու համար:

Բայց ամենասարսափելին գիշերն է: Յերեկոյան ժամը 6-ին բոլոր ողացքները փակվում են, և մինչև հետևյալ որվա առավոտյան ժամի 8-ը բանտարկյալները խեղդվում են չրչրգելությունից. վոսկրներն ու մկանունքը կոտրատվում են անտանելի հոգնածություն-

նից. հնար չկա մեկնվելու, ցավագին անդամներին հանգիստ տալու:

Յերբեք չեմ մոռանա 1921 թ. լույս փետրվարի 1-ի գիշերը, յերբ յես զգում եյի, վոր սոսկալի ցրտիցը փայտանում ու հետզհետե մեռնում եմ: Մինչև անգամ վոտներ շարժելն արգելված էր—իբր թե շղթաների շառաչյունը պահակի հանգիստն է խանգարում... Բոլոր սենյակներում բռնկվելու պատրաստ ապշուպն արագ ճնշվում էր. բայց, չնայած պահակի կատաղությանն՝ ամբողջ գիշերը լավում եյին փորահարինքից տառապող մեկի հուսակալուր տնքոցները: Կենդանի յե դեռ նա թե մեռել է—չգիտեմ. յես միայն այն տեսա, վոր յերբ մենք Ռուսների բանտը հասանք, նրա հետ միասին մի շղթայով շղթայված յերկու բնկեր տարան նրան ձեռների վրա, չնայելով, վոր ձեռնաշղթաները նրանց սոսկալի ցավ եյին պատճառում:

Նրան վորպես հիվանդի իրավունք չունեյին տեղափոխելու, բայց մի⁹ թե կալանավորի համար վորեւե իրավունք գոյություն ունի... Այն ինչ՝ մի այլ կալանավոր, մի հաստ սպեկուլյանտ, վոր բանտումն էլ վոչ մի բանի (նույնիսկ շամպայնի) պակասություն չուներ, տեղափոխության դիմանալու անընդունակ ճանաչվեց այն բժշկի կողմից, վոր նույն բանը մերժեց ինձ ու մի քանի հիվանդ նավաստիների: 500 կալանավորից միայն նրան ձեռք չտվին:

Գիշերները կալանավորների վագոնները միշտ կանգնեցնում են, իսկ ցերեկները կպցնում են մարդատար գնացքներին: Սրանից հեշտ է յեղրակացնելը, թե ի՞նչ շատ ժամանակ է պահանջվում Մարսելից Մելոն կամ Նիցցայից Տուաո փոխադրվելու համար: Կայարանի պլատֆորմից բանտարկվածների ահանջին են հասնում հեռավոր բացազանչություններ, խոսակցությունների կտորներ, աղջկանց ուրախ ծիծաղ, վորոնք

չեն ել հասկածում, վոր իրենցից փոքր ինչ հեռու մար—
դիկ են տառապում: Յեւ վո՞րտեղից իմանան այդ. կա—
լանավորների վագոնի արտաքին տեսքիցը չի կարելի
իմանալ, թե ի՞նչ գաղտնիք է թագնված նրա մեջ, և այդ
վագոնը հեշտությամբ կարելի չէ փոստային վագոնի
տեղ ընդունել...

Սակայն յետ շատ անգամ եմ տեսել, վոր ընկերները
դրսից բանակցության են մտել կամ վիճաբանության
են բռնվել վերակացուների հետ՝ մեզ ոգնելու փորձ
անելով: Բլոթանում մի քանի նավաստի կայարան եյին,
յեկել ու հետները ուտելեղեն, ծխախոտ ու գինի եյին,
բերել: Բայց նրանք անհաջողության հանդիպեցին. վոչ
մի վերակացու սիրտ չարեց պատասխանատվություն
առնել իր վրա և նրանց կամավոր նվերները մեզ հաս—
ցնել: Յերբեմն վագոնի պատի այն կողմը բացազանչու—
թյուններ Կէին լսվում. «Մի՛ վհատեք, մենք ձեզ կ'ազա—
տենք»: Բայց վերակացուները վոչ վոքի մոտ չեյին թող—
նում: Կալանավորները պիտի չիմանան, վոր ժողովուր—
դը իրենց մասին մտածում է, իրենց համակրում է: Կա—
տարյալ կղղիացում—այս է կանոնը:

Ճանապարհորդությունը վերջացավ... Ընկձված,
ահաբեկված, Փիղիքապես ջարդված, կիսակենդան,
ձեռնաչղթաներով—դժվարությամբ դուրս են գալիս
նրանք վագոնից, միմյանց ոգնելով անց են կենում և
արդեն ել չեն նկատում վոմանց հետաքրքիր-թշնամա—
կան, իսկ մյուսների համակրական հայացքները: Բան—
տի յեռակի դարպասիցն անցնում են դժոխքի...

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂՎԱԾՆԵՐ

Ինձանով—տանջանքների աշխարհը,
 Ինձանով—դեպի թախիժ հավերժական,
 Ինձանով դեպի կորուսյալները.

Թողե՛ք ամեն հույս, այստեղ մտնողնե՛րդ:

Այս խոսքերը պատկերանում եյին հանճարեղ Դան-
 տեի յերևակայության մեջ դժոխքի դարպասի գլխին
 գծագրված:

Այո՛, Ֆրանսիական հանրապետության բանտը դը-
 ժոխք է: Բուրժուական հանրապետությունը իր իշա-
 նավայրերի դռների գլխին գծագրել է.

Ազատություն—Հավասարություն—Յեղբայրություն.

Ժամանակակից իրավակարգի ամբողջ խայտառա-
 կությունը, ամբողջ կեղծավորությունն է արտահայտ-
 ված այս խոսքերով:

Ահա մոտենում է կալանավորների մի խումբ: Նրանք
 դալիս են առաջվա պես շղթայված: Մեկը մյուսի հետե-
 վից բացվում են բանտի դարպասները և աղմկով փակ-
 վում: Կյանքի ձայները լռում են: Լռություն, գերեզ-
 մանի հավիտենական լռություն...

Պահակախումբն շտապում է հանձնել հաշվով իր
 «ապրանքը»: Ամենքը կան: Դեռ մինչև վերջնական
 հանձնումը ստորագրությամբ՝ կալանավորներին . կո-
 սիտ գոռում—գոչումով, սպառնալիքներով ու հայհո-
 յանքով քշում են մի առանձին շենքի մեջ՝ խուզարկելու
 համար: Վոչինչ չեն թույլ տալիս բանտը բերել—վոչ
 լուսանկար, վոչ մի այլ առարկա, վոր ազատ կյանքն է
 հիշեցնում: Խուզարկությունն սկսվում է: Կալանավոր-
 ները մերկ սպասում են իրենց հերթին, յերբեմն կեռ
 ժամ, ցուրտ միջանցքում: Կալանավորներն այլևս
 մարդ չեն. նրանք շարժվելու ազատություն չունեն:
 Նրանց դարձնում են ամեն կողմ, հրում են, հայհոյում,
 և նրանք մեքենայաբար կատարում են իրենց թելա-
 դրած շարժումները: Լավ է դեռ, յեթե այդ անելիս քացի
 չուտեն՝ բավականաչափ արագաշարժ չլինելու հա-
 մար...

Հետո սպասում են հազուստ կոչվածին: Սպասում են առնվազն մի քառորդ ժամ միևնույն ցուրտ տեղում: Այս պատճառով ամենաառողջներն ու ամենից յերիտասարդներն անգամ այսպիսի խուզարկությունից հետո սկսում են հաղալ: Բայց ահա պետական հազուստը բերին: Վերնաշապիկը սև կամ դարչնի գույն կոպիտ կտավից, վոր սովորաբար չափազանց յերկար ելինում կամ չափազանց կարճ. ամառը նրանով մարդ չողում ե, ձմեռը՝ մըսում: Գլուխը նավաստու գլխարկի նման մի բան ե: Հետո՝ ծանր, կոպիտ փայտե վոտնաման: Այս՝ բոլոր բանտերի սովորական «համազգեստն» ե: Բացառություն են կազմում Սեն-Մարտեն դը-Ռեի տաժանակիր աշխատանքի դատապարտվածները, վորոնք ով գիտե ինչու՝ ամերիկական զինվորների հազուստ են կրում: Փարիզի մի խոշոր Ֆիրմա, վոր կապալով ե վերցրել Կլերվոյի բանտը, տրնտեսության համար կալանավորներին ամերիկացի ինտենդանտներից աժան գնով գնած հին համազգեստներ ե հագցնում: Ուշագրավ ե, վոր այս բանտի կալանավորները, վորոնց թվումն ի հարկե ավազակներ ել կան, այն հանրապետության զինվորների համազգեստն են հագնում, վոր կեղծ մատնությունների հիման վրա մահու պատժի յե՝ յենթարկում անմեղ անարխիստներին*) և նույնպիսի համազգեստ հագած մարդկանց ստիպում ե գնդակահարել հեղափոխական բանվորներին:

Առաջին գործողությունը վերջացած ե: Նոր յեկածներին հագցնելուց, մազները խուզելուց և լողացնելուց հետո ուղարկում են քառանտին: Այստեղ բանտի վարչու-

*) Ընկ. Մարտին անշուշտ ի նկատի ունի ընկ. ընկ. Սակկոյին և Վենցետտին:

Թյուռնը նրանց ջոկջոկում է և ուղարկում զանազան արհեստանոցներ: Բայց չկարծեք՝ այս բաշխումը համապատասխանում է կալանավորների անհատական ընդունակություններին: Այս կողմից կատարյալ կամայականություն ու անարդարություն է տիրում: Բանտի արխատուկրատիան—սպեկուլյանտները, բանկիրները, նախկին սպաները, կարգալուծ քահանաները, մայրիկների սիրասուհիները, վոր արկածախնդիրներ են դարձել, հեշտ, ախորժեկի և արդյունավետ դործի յեն դրվում—ուղարկվում են գրասենյակը, հիվանդանոցը, խոհանոցը: Ուրիշների համար դժոխք, սրանց համար՝ հանգստյան տուն...

Յեթե մեկը կարողանար բարձրից դիտել Կլերվոյի բանտը, կը տեսներ, թե ի՛նչպես բանտի բակերում արևի կիզիչ ճառագայթների տակ բազմաթիվ մարդիկ անընդհատ քայլում են միևնույն շրջագծով, —տրտում, լուռ, մռայլ: Մի ժամից հետո բակերը կը դատարկվեն, արհեստանոցներում աշխատանքը կը յեռա, իսկ նույն այդ ժամանակը, մի հեռավոր ստվերախիտ բակում, մի տասներկու հոգի, բաճկոններն առանց կոճկելու, մատները ժլետների յեզրներին, հանգիստ ու ծանր, զբոսնում են ու զրույց անում Ֆինանսների և քաղաքականության մասին: Այդ բանտի արխատուկրատիան է, արտոնյալ կալանավորները: Վերակացուները սիրտ չեն անում նրանց նկատողություն անել, վորովհետև նրանք միշտ մուտք ունեն բանտի վարչության մոտ և հեշտ կարող են դուրս քցել տալ չափազանց յեռանդուն պահապանին: Միայն առաջին կարգի կալանավորների համար են արգելաբանները, միայն նրանց համար է ծեծը, յերբ կողմնակի վկաներ չկան: Այո՛, բանտումն, ինչպես և ազատ աշխարհում, դատակարգային խտրություններ կան: Մի անբախտ գինավոր, վոր բոպեյական յերկյուղի ազդեցության է յենթարկվել, մի բելվիլցի փոքրիկ տղա, վոր կարիքի բոպե-

յին գայթակղության չի դիմացել, — սրանք կաշխատեն քանտի արհեստանոցներում դատավճռով վորոշված ամբողջ 4, 5 կամ 10 տարվա ընթացքում. իսկ մի նախկին կապիտան, վոր 18 տարի ծառայել է խաղաղ ժամանակը և դասավիճել է յեղել ռազմաճակատ ուղարկելու պահին, կամ մի բանկիր, մի չարանենդ սնանկ, — նրանք հանգիստ անց կը կացնեն իրենց տարի ու կեսը, յերկու տարին, տաքուկ պաշտոն ունենալով բանտում:

Պաշտոնական թղթերին ու հանձնարարական նամակներին ծանոթանալուց հետո սկսում են կալանավորներին ձեռնարկել: Վերականգնողների շղթայով շրջապատված, ամեն կողմից ճիչերի ու աքացիների յենթարկվելով՝ նորեկները շարվում են գրասենյակի առաջի ընդունարանում՝ բանտի դատարանի մի ծաղրարանության ներկա լինելու համար: Յերկար սպասել տալուց հետո հանգիստավորությամբ գալիս են իշխանավորները — «Դատարանը»: Այդ բանտի տեսուչն է և չորս պաշտոնյա: Շտապ-չտապ դատավճիռներ են կայացնում. մեկին՝ կարգապահական բաժանմունք, մեկին՝ արգելարան, մեկին՝ տուգանք (բանտի բյուջեն ավելացնելու համար...): Հետո՝ նորեկներին հարցովորձն ու տեսչի «ճառը»: «Այստեղ բացարձակ լուություն պիտի տիրե գիշեր-ցերեկ: Կարգապահություն — արդարություն — հավասարություն... Գործ արե՛ք, աշխատեցե՛ք... Ով վոր արժանի լինի, մենք կը ներենք նրան, — պայմանական պատիժ կը նշանակենք»:

Ճառը վերջացավ: Յեվ ահա նորեկներին թվահամարում են, ձախ թեկները դրոշմում ու քշում արհեստանոցները:

* * *

Ով իմ սիրելի ընկերներ, վոր հիմա ազատված եք, հիշեցե՛ք ձեր բանտի արհեստանոցները մտնելու առաջին ո-

ըր, վորտեղ դուք տարիներ տառապել էք... Միտ բերե՛ք նրանց, վոր դեռ մնացել են բանտերում: Հանուն ձեր անցյալ տառապանքների, դո՛հեցե՛ք ձեր ազատ ժամանակի մի մասը, մտե՛ք բանվորական կազմակերպութ՜յունների մեջ, հեղափոխական խմբակների անդամ դրվեցե՛ք, հաճախեցե՛ք բանվորական ժողովները: Ասացե՛ք բանվորներին, վոր այն բոլորն, ինչ վոր յես այստեղ գրում եմ, խկութ՜յան մի թույլ նկարագիրն է միայն: Պատմեցե՛ք նրանց ձեր տեսածը, ձեր ասրածը: Ձե՞՞ վոր մեր պարտքն է—բոլոր աշխատավորների աչքը բանալ, վոր տեսնեն, թե ին՛չ բան են Ֆրանսիական հանրապետութ՜յան բանտերը. ձեր պարտքն է դրավել տատանվողներին, վորպեսզի ամբողջ բանվոր դասակարգը միահամուռ կերպով յուր ընկերներին ազատութ՜յունը պահանջե: Յեվ նա այդ նպատակին կը հասնի, բայց վոչ խոսքով, այլ գործով...

ՏԱԺԱՆԱԿԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ

...Բանտը զարթնում է: Ահագին ու լուին՝ հանգստաբանի յե նմանում. վոչ մի ձայն, յերբեմն—յերբեմն միայն պահապաններն են միմյանց ձայն տալիս: Առավոտյան ժամը յոթն է: Հնչում է զանգը,—ազդանշան կենդանի թաղվածներին: Մի տարորինակ, անհասկանալի թրնդ յուն է սկսվում, վոր լցնում է ամբողջ բանտը. կանոնավոր, ութմիկ, խուլ հարվածներ կրկնվում են ամեն մի հինգ վայրկենից հետո. բացազանչութ՜յուններ են լրսվում բանտի բակի զանազան ծայրերում:

Այդ՝ կալանավորներն են արհեստանոցները գնում աշխատելու... Հափով քայլեր զարկելով իրենց ծանր փայտե վռտնամաններով՝ գնում են նրանք յերկար շարքով, կորագլուխ, գիշերվա մղձավանջային յերազներից ծանրացած: Նորից որը բացվեց, տառապանքների որջ: Ներքնակը վոլորած, անկողինը հավաքած է, և դարձյալ

գնում են արհեստանոցները, բանելու: Բանտարկյալները գնում են, թաքուն, ծուռ-ծուռ վերակացուն նայելուր ամիլած, անբեխ դեմքերի վրա թախծի ու զայրույթի — ինչպես պիտի լինի վերակացուն այսօր: Ինչպես անվերջ գալարվող մի շղթա գնում են կալանավորները, բոլոր ամիլած, անբեխ դեմքերի վրա թախծի ու զայրույթի, ատելության և անհուն վշտի բազմադան արտահայտություններ են նշմարվում:

Մեքենագործարաններն արդեն թնդում են: Հնոցավառներն ու մեքենավարները վաղուց են բան քցել մեքենաները: Վոչ մի բուպե կորցնել չի կարելի: Ամեն մեկը յուր արհեստանոցի շեմքիցն անց կենալուց հետո անմիջապես շտապում և դադդյահի մոտ: Մի քանի բախտավորներ, վորոնց համար իրենց ընտանիքներն առանձին վճար են տալիս բանտին, հավաքվում են մի անկյունում և սպասում են թանգ գնով ձեռք բերված իրենց բաժին սուրճին, — մի սև, անհամ տաք հեղուկ:

Սկսվեց գործը — պատիժ դարձրած հարկադիր աշխատանք... Տաժանալի աշխատանքների և բանտարկության դատապարտվածներին բոլորին հարկադիր աշխատանք են անել տալիս. միայն բերդարգելության դատապարտվածներն (մի պատիժ, վոր զինվորական դատարաններն են նշանակում) են աշխատանքից ազատված, բայց վորովհետև նրանք լրացուցիչ փայլի փշրանքներն ստանալու հնարավորությունից զրկվում են, յեթե վայելում են որենքով իրենց վերապահված առավելությունները, ուստի նրանք ևլ ստիպված են գնուր բանելու՝ սովից չմեռնելու համար: Հարստահարիչ կապիտալը քաղում է այն բոլոր ոգուտները, վոր կարող են տալ նրան այս կանոնները: Ի հարկե՞: Յուր տրամագրության տակ ունենալ գրեթե ձրի բանվորներ, վորոնց պատժել ևլ կարելի չե, յեթե բավականաչափ արդյունավոր չե նրանց աշխատանքը, վորոնք գործադուլ անելու

կարողութիւնն չունին, վորոնց վոչ վոք պաշտպան չի հանդիսանա . . .

Բանտի վարչութիւնը՝ միանգամայն հասկանալի չէ, վոր պաշտպանում է ձեռնարկողի շահերը, վոր կապալով է վերցնում կալանավորների աշխատանքը: Ախտ արգելվում է գործը դեթ մի բռնակով դադարեցնելը, արգելվում է խոսել, գլուխ բարձրացնել, շուռ գալ: Ամենափոքր առթիւ, նույնիսկ առանց վորեւէ առթի նըկատողութիւններ են արվում, սպառնալիք, նույնիսկ պատիժներ են տրվում: Վոչ հին վերքերի բացվելը, վոչ նորոգված ճահճատենդով բռնվելը ուշադրութեան չեն առնվում և հիմք չեն ծառայում աշխատանքն ընդհատելու համար: Յեթե դժբաղդը գանգատվում է վերակայուելին—միայն մի պատասխան կա. «Յես չեմ քեզ վարձել. վոր սատկես ել, պիտի քանես»: Յեւ կալանավորները բանում են, մինչև վոր ուժասպառ են լինում:

Բանեցնում են խմբերով, բայց խումբ կազմելիս անհատական ընդունակութիւններն հաշվի չեն առնում: Պատահում է, վոր կալանավորի համար անհնարին է դառնում այս կամ այն գործն անելը: Այդպիսի դեպքում պատիժներ է, վոր թափվում են խեղճի գլխին, մինչև վոր արգելարանից տանում են նրան հիվանդանոց, վորտեղից նա վերադառնում է այլանդակված ու խոշտանգված:

Յերբ յես աշխատում էյի Կլերվոյի բանտի գուլպայի արհեստանոցում, հիշում եմ—ինձ հետ միասին աշխատող 154 ընկերներից 112-ը պատժվեցին վոչ բավականոչափ արդյունավոր աշխատանքի համար: Նրանք բոլորը դատաւարաւած էյին զինվորական դատարանների վրձիռներով, մեծ մասը պահեստի ծեր զինվորներ կամ յերկրապահներ: Վոչ վոք չի հավատա, թե այս ձևերը, վոր միանման են բոլոր բանտերում, արդյունք չեն գլտակցարար գործադրվող մի սխտեմի, վոր մանրամասն

մշակված է, լավ մտածված և աջակողմյան քաղաքական
կուսակցությունների՝ ընդհանուր ներման դեմ մղած
պայքարին համաձայնեցրած: «Բանտիցը նրանցից
վորքան քիչ դուրս յեկող լինի, այնքան լավ»: Պարզ է,
վոր այս է նրանց նշանաբանը:

Ի հարկե, աշխատանքի վոչ մի տեսուչ յերբեք վուտ
չի դրել այս արհեստանոցները: Ճիշտ է, բանտարկյալ-
ները «պաշտպան» ունեն: Դա բանտերի վարչության վե-
րահսկիչն է, մի պաշտոնյա, վոր միշտ բանտումն է լի-
նում: Նրա պարտականությունն է բանտարկյալների
համար բարեխոս լինել բանտապետի առաջ. բայց միև-
նույն ժամանակ նա բանտապետի ոգնականն է ու փոխա-
նորդը, և շատ անգամ նա յուր «մեծավորի» բացակայու-
թյան ժամանակ ավելի խիստ պատիժներ է նշանակում:

Բանտի արհեստանոցներում գլխավորապես կոճակներ
են շինում: Այդ աշխատանքի ժամանակ սաստիկ փոշի յե
բարձրանում, վոր յերկարատե հազ է առաջացնում: Մի
քանի արհեստանոցներում փոշեքաղներ կան, բայց այնքան
թույլ, վոր գրեթե վոչ մի ազդեցություն չեն անում:
Սակայն Կլերվոյի բանտապետն այս արհեստանոցներն է
ուղարկում ամենայերիտասարդ կալանավորներին, վոր
ավելի յեն յենթակա թոքախտի... Սովորաբար հեղա-
փոխական կազմակերպութունների, սինդիկատների
հետ առնչություն ունեցող բանտարկյալներն ուղարկ-
վում են այս կորստաբեր արհեստանոցը. այստեղ են ըն-
կել, իբր թե պատահաբար (միշտ «պատահաբար...»)
նաև իմ նավագ ընկերներից լավագույնները, այլև Ողե-
սայի 1919 թ. ապրիլին մասնակցող մի քանի նա-
վաղներ:

Աշխատանքի ընդհանուր պայմաններն այնպես են,
վոր արհեստանոցներում բանողներին միշտ վորևե խե-
ղանդամություն է սպառնում: Կլերվոյի բանտի յերկու
փայտազործարաններում շաբաթը միջին թվով մի-մի

պատահար եր տեղի ունենում: Այդ դեպքերը միշտ կատաղեցնում են բանտապետին, վոր արհեստանոցներումն աշխատիսի հայտարարությունն եր կախ տվել.

«Աշխատանքի ժամանակ ամեն մի ֆուսավածք կամ վերք ստացող կալանավոր խիստ կը պատժվի հիվանդանոցից դուրս գալուց հետո»:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր վոչ պետությունը և վոչ բանտի աշխատանքի կապալառու-կապիտալիստը վոչ մի կոպեկ չեն վճարում տուժողին խեղանդամության համար:

Ճարտարությամբ կազմված և լավ սովորեցրած կեղծ վկաների ստորագրած մի արձանագրությունն աշխատիսի դեպքերում միշտ վկայում ե, վոր կալանավորը «դիտմամբ» այնպես ե արել, վոր ձեռը ջախջախվի կամ բազուկը կտրվի...

Ճաշի և ընթրիքի ժամանակը վորոշված ե առավոտյան ժամը 9-ին և ցերեկվա ժամը 4-ին. սակայն բանտի վարչությունը ձեռնարկուի ոգտի համար այդ ժամերը ձգձգում ե մինչև ցերեկվա 12-ը և յերեկոյան 6-ը, վորպեսզի աշխատանքի ժամերն ավելացնե, և կարեւորությունն չի տալիս այն բանին, վոր դժբաղդ կալանավորները քաղցածությունից ուժասպառ են լինում—մինչև ժամը 12-ը բանում են անոթի:

Բանտի աշխատանքի ամբողջ կազմակերպությունը հիմնված ե այն սկզբունքի վրա, վոր «կալանավորիցը քամեն այն ամենը, ինչ վոր կարելի յե, առանց միտ դնելու, վոր աշխատանքով ծանրաբեռնելը նրան դեպի մահ ե տանում»: 1915 թ. սկսած Ֆրանսիական բանտերը, զինվորական դատարանների դատապարտածների բազմության շնորհիվ, դարձել են ստրուկների կայարաններ, վորոնցից պետք ե շտապել վորքան կարելի յե շատ ոգուտ քաղել, քանի վոր ուժասպառությունը կամ ազատությունը դեռ չեն խլել նրանց վարչության ձեռքից: Յես շատ անգամ եմ խոսել քրեական կրկնահանցագործների հետ. նրանք ամենքը միաբերան պնդում են, վոր

բանտը վերջին ժամանակներն անճանաչելի յե դարձել է։
Պատերազմից առաջ բանտը սանատորիում էր՝ ժամա-
նակակից բանտի համեմատությամբ...

Պաշարման դրությունն անտարակույս նպաստել է
այն բանին, վոր տաժանակիր աշխատանքների բանտերը
դարձել են ներույթ շահագործման կենտրոններ։ Յեւ վո-
րովհետեւ կալանավորների աշխատանքի կապալառու-
ներն ահագին ոգուտներ են ստանում իրենց ձեռնարկու-
թյուններից, ուստի պարզ է, վոր ստիպում են արդարա-
դատության նախարարությանը բոլոր հյուսիսը քամել
միլիտարիզմի յերկաթե ճանկերն ընկած թշվառներից։
Միևնույն յերևույթը կա վոչ միայն բոլոր կենտրոնական
տաժանակիր բանտերում, այլև բոլոր կալանավայրե-
րում, — կայենում և հռչակավոր բանվորական բանակա-
տեղիներում, վոր խայտառակություն են ժամանակակից
Ֆրանսիայի համար։

ՍՈՎ

Ժամբ 12 է։ Նորից զանգ են տալիս։ Կալանավորները
լուռ ու մունջ, հոգնած ու քաղցած, խմբով մտնում են ա-
հագին սեղանատները։ Ամեն մեկը թևի տակ տանում է
իր բաժին սև հացը (600 գրամ), վորի կեսն արդեն կերել
է. ամեն մեկն առնում է հերթով յուր ամանն ու տեղ է
բռնում սեղանի մոտ։ Կալանավորները, վոր դոհ են, վոր
հոգնեցուցիչ աշխատանքից հետո կարող են նստել, լուռ,
առանց մի խոսք ասելու, ազահությամբ վրա յեն պրծ-
նում իրենց ամանին։ Կերակուրը սովորաբար գոլ ջուր է,
վորի մեջ բանջարեղենի կտորներ են լողում, մեծ մա-
սամբ փչացած։ 1922 թ. սկսած այս ճաշին մի փոքր հաց
են, ավելացնում, վորովհետեւ կալանավոր-զինվորների
նախնական բանտարկությունն այնքան էր նրանց ուժա-
սպառ արել, վոր նրանց աշխատանքի արդյունավորու-


թյունը խիստ պակասել էր: Մի քանի վայրկենում ամ-
բողջ ապուրն ուտում են, ամանը լաւատում ու չորացնում,
և գոթաղղներն սկսում են ջուր խմել, վորպէսզի փորնե-
րը լցնելով կուշտ լինելու զգացումն ունենան, գեթ մի
ժամ . . .

* *

*

Ընթրիքին բացի ապուրից տալիս են մի բաժին չո-
րացրած բանջարեղեն, վոր միշտ վատ յեփված և հո-
տած է լինում: Վառելիք խնայելու և յեփն արագացնելու
համար բանջարեղենի հետ բավականին քանակությամբ
պոտաս են քցում, վոր հաճախ աղիքների հիվանդու-
թյուն է առաջացնում: Հինգշաբթի, կիրակի և տոն որե-
րին բանջարեղենի փոխարեն տալիս են մի կտոր խիստ
կասկածելի վորակի տավարի միս:

Յեթե կալանավորներին համար տրվող բոլոր մթերքը
խոհանոցն ընկներ (վոր իրոք չի լինում), նրանք այն-
քան սնունդ կստանային, վոր բավական կը լինէր նրանց
որդանիղմը պահպանելու համար՝ միանգամայն հան-
գիստ մնալու պայմանով. շատ աշխատողի համար, այս
սնունդն, ի հարկե, բավական չէ: Իրենց աշխատած փո-
ղով կալանավորները կարող են ուտելեղեն գնել: Բայց
աշխատավարձիցը պետական գանձարանի ոգտին հանում
են մինչև 50 տոկոսը, այնպէս վոր՝ մնացած աշխատավար-
ձի միայն կեսը կարող է ծախսվել ուտելեղեն գնելու հա-
մար: Յեւ խեղճն ուժասպառ լինելու չափ աշխատում է
մի աման կիսով չափ փտած կարտոֆիլ կամ 40 գրամ
կծված կարագ գնելու համար: Աշխատավարձի աննշան լի-
նելու շնորհիվ կալանավորը յերբեք կուշտ ուտել չի կա-
րող, բայց նա յուր բոլոր ուժերը լարում է՝ գեթ այդ
փոքրիկ հավելումը ձեռք բերելու համար . . .



Անհրաժեշտ է նկատել, վոր այն ինչ 1912 թ. կարելի չէր որական 6—8 սուլով*) կշտանալ, այժմ դրա քառապատիկ գումարն է պահանջվում, մինչդեռ աշխատավարձի սակացույցն ավելացել է ընդամենը 20 տոկոսով: Թեպետ պետական գանձարանի համար ուղղակի ձեռնտու չէ այդ սակացույցը բարձրացնել, վորովհետեւ կալանավորներին աշխատավարձի կեսն ինքն է վերցնում, բայց այդ ձեռնարկունների շահերին հակառակ կը լիներ: Բանտապետները գերադասում են բյուզեյի այլ ճյուղերում տնտեսել, որինակ, անոթների կլայեկելը, վոր ուշ—ուշ է լինում, այն ել՝ կապարով: Աղղականներից փոքր ինչ ոգնություն ստացող բանտարկյալը դեռ կարող է ապրել, բայց այդպիսիները շատ չեն. մնացածներն իսկապես, վոր սովատանջ են լինում:

Քաղցած կալանավորներն ամեն բան պատրաստ են ուտելու, ինչ վոր կարելի չէ կուլ տալ. Նիմումն ուտում է յին բակերի քարերի արանքներից դուրս յեկած խոտերը, Տուառում՝ ծառերի չոր տերեւները, Մեւոնում՝ կաղմատների սոսինձը... Ֆրանսիայի կառավարիչ շրջաններն հանգդնություն ունին հարձակվելու ուսական հեղափոխության վրա, մեղադրելով Վոլգայի նահանգների սովի համար, վորի պատճառները տարերային էյին, իսկ իրենք սովամահ են անում այն ղինվորներին, վոր մի վայրկյան զգվանք են ստացել դեպի այն դարհուրելի սպանդը, վոր անվանում են «մեծ պատերազմ Յեվրոպայի ժողովրդների իրավունքների և աղասության համար»...

Այս հյուծված բաղմության մեջ մահն առատ հունձ է անում: Ամենաթեթեւ հիվանդությունը, կարգապահական ամենաթեթեւ կալանքն արգելարանում՝ համազոր է մահու պատժի: Նիմի բնակիչներն ահով էյին դիտում այն հուղարկավորությունները, վոր շարաթը յերեք-

*) Հավասար է 14 կոպ.

չորս անգամ տեղի էյին ունենում կենտրոնական բան-
տից դեպի հանդստարանը, իսկ մահացության դեպքերը
հաշվի առնելն անկարելի դարձնելու համար մի սայլի
միջոցով քանի դադար էյին դնում:

Կլերվոյում 1600 բանտարկյալներից մի տարվա
ընթացքում (1917-1918) մեռել են 258 հոգի, վորոնցից
191-ի մահվան պատճառը պաշտոնապես ճանաչվել է
«սննդի պակասությունը», այսինքն՝ սովամահություն:
Յես դեռ չեմ հաշվում նրանց, վորոնք այն տարուն հա-
ջորդող ամիսների ընթացքում մեռել են թոքախտից
կամ հյուծված լինելուց: Յեվ այս բոլորը տեղի չե ունե-
նում դեմոկրատական Ֆրանսիայի կենտրոնում-Նիմում,
Ռիոմում, Մելոնում, Պուաուիում, Կլերվոյում:

Մի յերկու փաստ ես: 1918 թ. դարնանը մի խումբ
բանտարկյալներ ուղարկվեցին Փարիզի ամրացրած բա-
նակատեղը հող փորելու աշխատանքներ կատարելու:
(Անցողակի նկատեմ, վոր նրանց խոստացել էյին՝ բո-
լորովին ներել հատուկ յեռանդով աշխատողներին և մեղ-
մացնել բոլորի պատիժը: այն ինչ՝ պատիժների ժամանա-
կի աննշան կրճատումներ արին միայն: Սուտն ու կեղծա-
վորությունը մեր «դեմոկրատ» կառավարության դեկա-
վար սկզբունքներն են): Յերկաթուղու ծառայողներն, ի
հարկե, չեն մոռացել այն այլազան պատուոված նշանա-
դգեստներով, սովից փայլող աչքերով, փոս ընկած այտե-
րով զինվորների եչելոնները, վորոնք սոված գայլերի
նման վրա էյին պրծնում ամեն մի ուտելիքի:

Այնտեղ ամերիկացիներ ել կային, վոր այդ «անբեխ
զնդերի» անցնելու ժամանակ՝ կայարաններում կանգնած
նայում էյին նրանց այնպիսի հետաքրքրությամբ, ինչ-
պես վոր կենդարանական պարտիզում զրոսնողները նա-
յում են վանդակներում փակված վայրի գազաններին:
Մեր անդրատլանտյան դաշնակիցները կարող էյին գոնե
ծանոթանալ «աղնիվ» Ֆրանսիայի քաղաքակրթության

աստիճանին և իրենց հայրենիքում հաղորդել Ֆրանսիա-
կան «կուլտուրայի» գոհարներից ստացած տպավորու-
թյունները...

* *

Կրկին ու կրկին անգամ ձեզ եմ դիմում, բանտից
ազատված ընկերներ՝ Վլերվոյում հուսահատություն ե-
տիրում, և լավում են թշվառ բանտարկյալների հառա-
չանքները.

«Ի՞նչ են անում այնտեղ ազատություն վայելողները:
Ինչո՞ւ չեն խոսում: Անշուշտ բանվորները չգիտեն, թե՞
ինչպես ենք մենք տառապում, թե՛ վորքան մոտ եմ եր մա-
հը: Յեթե իմանային, վաղուց խորտակած կը լինեյին մեր
բանտի դռները»:

Սիրելի՛ բարեկամներ և բոլոր այս անիծյալ վայրում
յեղածներդ: Պատմեցե՛ք, անդադար պատմեցե՛ք ձեր տե-
սածը, ձեր կրածը: Ամեն մի նախկին բանտարկյալ քարո-
ղիչ պիտի դառնա. պետք է, վոր Ֆրանսիայի ամբողջ
պրոլետարիատն իրազեկ լինի այս սոսկալի իրականու-
թյանը:

ԶԲՈՍԱՆՔ

Կեսորից կես ժամ անց է: Լավում եմի սուր սուլոց.
«Հանգստյան», կալանավորների զրոսանքի ժամն է: Մեկ-
մեկու հետևից վեր են կենում նրանք, սեղանի շորս կող-
մը նայում, հավաքում հացի փշրանքներն ու դուրս դա-
լիս սեղանատանից նույնպես հոգնած, տրտում, մռայլ:
Միաչափ քայլերով դուրս են գալիս բարձր պարիսպով
պատած մի փոքր բակ, և ահա «զրոսանքն» սկսվում է:

Բանտի կյանքի պատկերներիցն ամենից ավելի կա-
լանավորների զրոսանքն է, վոր տաժանակիր աշխա-
տանքների ցայտուն դրոշմն է կրում: Մի քանի քառա-

Այսուի մետր տարածության վրա 300 հոգի յերկու ան-
վերջ, զուգահեռական շարքով քայլում են միաչափ.
այս ու այն թևում կանգնած վերակացուները, չափ են
տալիս. «ա՛ջ, ձա՛խ»: Կալանավորների բազմությունը
հրամանի համեմատ կրկնում են չափը՝ իրենց ծանր
փայտե վռտնամաններով վռտները գետնին խփում:

Ամառը, հինգ րոպե այսպես քայլելուց հետո, շրջա-
պատող ողն անտանելի հեղձուցիչ է դառնում. բարձրա-
նում է փոշու խիտ ամպ, վո՛ր կաշում է քրտնած դեմքե-
րին և հետզհետե ծածկում է ամբողջ մարմինը. կոկորդե-
ները չորանում է. ծանր, հասակի համեմատ չկարված
հազուստը շարժումներին արդելք է լինում, քրտինքը
կարկտի պես թափվում է... Չմեռը ցուրտը մարդու յե-
րես է վառում, ականջներ կծում. ձեռները սառչում են-
վոչ վարտիքը, վոչ բաձկոնը գրպան չունի: Յեթե մեկը
փորձում է ձեռը վարտիքի գոտկատեղը կոխել, իսկույն
կարգի յե հրավիրվում: Ստիպված են շարունակ բակի
չորս կողմը քայլել՝ ձեռները կախ քցած: Չբոսանքը
պարտադիր է ամեն ոք, ինչ յեղանակ ել լինի, բացի տե-
ղատարափ անձրևից: Ի՛նչ կուղեյի տեսնել մեր պարլա-
մենտի գործիչներին այսպես զրոսնելիս փոխանակ
Լյուքսեմբուրգի պարտիզոնին զրոսնելու՝ պատգամա-
վորների ժողովումն իրենց ունեցած «ծանր աշխատան-
քից» հետո...

Ամբողջ կես ժամ է տևում այս զրոսանքն առանց
կանգ առնելու, առանց մի րոպե շունչ առնելու: Ամենքն
ել մի ցանկություն ունեն—վորքան կարելի յե շուտ անց
կենալ այն ոլորանը, վորտեղ արևն անխնա յերես է այ-
րում. այդ անցկենալուց հետո ահով մտածում են հետեվ-
յալ անգամի մասին:

Յերբեմն ճշոցներ են լսվում. այդ՝ հայհոյում են
ընկերոջն աչքով անող մի կալանավորի: Բայց հիմա մեծ
ինքվիզիտոր—արդարադատության նախարարը կար-

գաղություն եւ արեւ, վոր կալանավորները բաշլըղ գործածեն՝ յերեսների վրա քաշած, բացի արհեստանոցներում բանելու ժամանակից: Սոսելու համար յերկրորդ նկատողություն անելուց հետո մեղավորին արգելարան են նստացնում: Մի անգամ, իմ աչքի առաջ, Նիմի բանտում ծեծ տվին իմ Սե ծովի նավատորմի մի յերիտասարդ ընկերոջը նրա համար, վոր յերկու խոսք եր ասել մի այլ բանտարկյալի: Բայց ամենից հետաքրքրականն այն է, վոր նա իրավունք ուներ այդ անելու: Որենքով բերդարդելության դատապարտվածները միմյանց հետ խոսելու իրավունքից զրկված չեն:

Ուտելուց հետո զբոսանքը պարտադիր է: Յեթե ցերեկվա զբոսանքը մի ծանր բան է, յերեկոյանն ավելի տանջալից է: Յերեկվա ծանր աշխատանքից հետո կալանավորները միանգամայն ուժասպառ են լինում. նրանք դժվարությամբ են վրա վերստում, ամեն քայլում սայթաքում և բոսկեններն են համարում, թե յերբ պիտի գա այն վայրկյանը, յերբ թույլ ե տրվում իրենց խղճուկ անկողինը մտնել և մոռացվել քնելով:

Կիրակին հանգստյան մի ամբողջ օր է. այս կարգի խկապես սկսվեց գործադրվել՝ Նիմի կենտրոնական բանտի 450 կալանավորների քառասուն ութ ժամ գործադուլ անելուց հետո միայն, . գործադուլ, վոր մենք կազմակերպեցինք 1920 թ. նոյեմբերին: Հրահանգի համաձայն բանտարկյալները կիրակի օրերը պիտի անցկացնեն արհեստանոցներում, իրարից վորոշ հեռավորությամբ շարած տարբերետների վրա նստոսած. Այս տեսակ հանգիստն ինքնին մի անտանելի պատուհաս կը լիներ. բայց բանտապետները չեն պահանջում, վոր բանտարկյալներն անպատճառ արհեստանոցներում լինեն, վորովհետև պետք կը լիներ կիրակի օրերն ել արհեստանոցները տաքացնել: Ուստի «խեղճ» միլիոնատեր ձեռնարկուներին ապարդյուն ծախսերից ազատելու համար

նրանք աշխատում են կիրակի օրերը կալանավորներին վորքան կարելի յե յերկար պահել բաւումը: Կլերվոյում նրանց այնտեղ ամբողջ օրն են պահում:

Ահա թե ինչով ե բացատրվում, վոր կալանավորները ջերմեռանդությամբ հաճախում են կիրակնօրյա ժամասացությունը: Հակառակ մրսելու հավանականության՝ նրանցից ամեն մեկն ուրախ ե, վոր կարող ե մի կես ժամ հանգիստ նստել յեկեղեցում: Սակայն ժամասացություն հաճախելը պարտադիր ե ամենքի համար, ով վոր բանտ մտնելիս չի հայտնում թե ինքն ուրիշ կրօն ե դավանում կամ միանգամայն անտարբեր ե կրօնի նկատմամբ. յեթե վեց ամիս բանտումը մնալուց հետո բանտարկյալներից մեկը, կորցնելով հավատը դեպի «սիրո ե յեղբայրության» խոսքերը, վոր ամեն կիրակի լսում ե բանտի քահանայից, հրաժարվի յեկեղեցի հաճախելուց, նրան իսկույն արգելարան են նստացնում ե բանտապետի առաջարկությամբ արգարադատության նախարարը դատապարտում ե շղթայելու 90 օրով: Այս պատժին յենթարկվեցին Կլերվոյում մինչև տասն ընկեր:

Ամիսը մի կիրակի ամենամեծ մխիթարության օրն ե դժբախտ կալանավորների համար: Այդ այն կիրակին ե, յերբ կալանավորին թույլ ե տրվում նամակներ գրել իր հարազատներին: Որերն ու շարաթներն են համարում, թե յերբ պիտի դա այդ յերջանիկ օրը. քանի՜ անգամ իրենց մտքումը նամակը հորինում ու փոխոխում են, ե յերբ վերջապես դալիս ե այդ բաղձալի օրը, խեղճերը մանկական հրճվանքով վազում են նամակներ գրելու համար հատկացրած սենյակը: Ի՞նչ հուզմունքով են գրում այդ նամակները: Ի՞չպես են ամեն մի բառը կըշռադատում: Վոչ մի թուղթ այնպիսի ուշադրությամբ մտածված չի գրվում, ինչպես կալանավորի նամակը: Մի քանի բոպեյի ընթացքում կալանավորի մտավոր աչքի առաջ կենդանանում են յուր ընտանիքի, հայրենի

դյուղի ծանոթ պատկերը: Բայց ահա վերակացուի կո-
պիտ կանչը վերջ և տալիս նրա յերազներին. նա պիտի
չտապով ավարտե նամակն ու գնա նորից անվերջ քայ-
լելու:

Տարորինակ կարող և թվալ, թե ի՞նչպես և, վոր
յերկար տարիների ընթացքում անընդհատ տանջանքնե-
րի յենթարկվող մարդիկ, վոր պատրաստ են այնպես
արագ մահ բերող ճակատամարտի դժոխքն ավելի լավ
համարել, քան բանտի դժոխքը, վոր ստուգապես դեպի
կորուստ և տանում, — ի՞նչպես և, վոր այդ մարդիկ «դրո-
սանքների» տանջանքներին դիմանում են: Բայց ով վոր
ծանոթ և Փրանսիական բանտին, նրա համար այս բնավ
դարմանալի չէ: Ամեն վոք կը սարսափի այն մտքիցը, թե
ի՞նչ դարհուրելի, տանջալից մահ և սպառնում իրեն ապ-
շուպի ամենափոքրիկ փորձի դեպքում: Մեծ մասը բան-
տը վերադառնալուց հոժարությամբ կը գերադասեյին
վայրկենական մահը, ինչպես այդ արին անցյալ տարի,
ոգոստոսի 29 ին, զինվորական-դաշտային դատարանի
հանձնված յերկու զինվոր Ալթիրում, Կազարլանկա-
յում: Բայց կենտրոնական բանտում մահու չեն դատա-
պարտում. մեր հանրապետության պաշտոնյաները
ավելի վստահելի յեղվիտական յեղանակով են դոր-
ծում: Վերակացուի վրա ձեռք բարձրացնողը կանոնա-
դրության համաձայն դատապարտվում և արգելարանում
փակվելու 90 օրով, վորից յերեսուն օրը շղթայված:
Որական մի քանի անգամ բանտի ավագը վորոշ թիվ հար-
ված և հասցնում նրան վոտով կամ փայտով, նայելով
թե քանի շիշ գինի և խմած լինում: Մի քանի շաբաթ
այսպես պահելուց հետո նրան տանում են հիվանդանոց,
վորտեղ նա մեռնում և «բնական» մահով:

Յեվ այսպես ամենքը լռում են, վոչ վոք չի համար-
ձակվում բողոքել: Բայց կալանավորների հյուծված դեմ-
քերին նայողը թաղցրած զայրույթի նշաններ կարող և

Վարդալ, նրանց աչքերը վառվում են վրեժխնդրության հրով, իրենց տանջողներին ու դահիճների արյան անհաղ ծարավով:

ԳԻՇԵՐ

Գիշերային խավարի մեջ խորհրդավոր ուրվականների պես բարձրանում են բանտի մուռյլ, վիթխարի պարիսպներն ու շենքերը. աղոտ առկայծում են կալանավորների սենյակների թույլ լուսավորված պատուհանները. պահնորդները միմյանց ձայն տալով, ամեն քառորդ ժամը մեկ խանդարում են լռությունը: Ի՞նչ չար հեղնություն բաղդի: Զինվորականի զգեստ հագած բանվորներն իրենց յեղբայրների պահակն են դարձել: Մի անգամ այնպես պատահեց, վոր մի նորակոչ զինվոր պահակության երկանգնած բանտի առաջ, վորտեղ բանտարկված երյուր դասալիք հայրը... Իսկապես մի վողրերգական զուգադիպություն:

Կալանավորները քնում են (կամ, ավելի ճիշտ, աշխատում են քնել) յերեկոյան ժամը յոթից: Սենյակները վայրի գաղանների վանդակների նման են. ամեն մի սենյակի յերեք պատը խուլ է, աղյուսից շինած. չորրորդը—դրսի կողմը փակված է ամբողջովին յերկաթե ծանր վանդակով: Ամեն մի սենյակի յերկարությունը հավասար է անկողնի յերկարությանը, լայնությունը՝ հազիվ ներքնակի կրկնակին է: Հենց վոր կալանավորը մտնում է իր վանդակը, իսկույն պիտի պառկի մահճակալի վրա և պառկած մնա մինչև առավոտ. վանդակների առաջ ման է դալիս վերակացուն, վորը խիստ հետեում է, վոր կալանավորները միմյանց հետ չխոսեն:

Սենյակներում կատարյալ լռություն է տիրում: Կալանավորները հանգստանում են ցերեկվա ծանր աշխատանքից. նրանց միտքը կանգ է առնում որվա անցքերի

վրա, հետո աննկատելի կերպով սլանում ե դեպի անցյալի հիշողությունները. նրանց մտավոր աչքի առաջ կենդանանում են հարազատների սիրելի պատկերները. հարյուրավոր անգամ ազոտ լույսով կարդում են նրանցից ստացած տրորված, կեղտոտված, բայց անչափ սիրելի նամակները, և պահանջ ե զգացվում ընկերների հետ հաղորդակցություն ունենալու:

Ահա կալանավորներից մեկը զգուշությամբ նշան ե տալիս յուր հարեանին. տոմսակը կամաց կոխում ե վանդակի մեջ: «Տո՛ւր Պիեռին. ապա՛, վոր պատասխանի յեմ սպասում»: Կամաց—կամաց աղմուկ ե բարձրանում, վորին ավագն տշխատում ե վերջ տալ. հետո լքվում են առանձին—առանձին բառեր, ամբողջ նախադասություններ են փոխանակում, և բոլորը մի բանի մասին ե—ընդհանուր ներման, տենչալի ազատության:

Խեղճ ընկերներ: Նրանց հիմա այնպես ե թվում, թե այդ խնդիրը ամբողջ համաշխարհային քաղաքականության կենտրոնն ե... «Յեվ այսպես, ուրեմն, յերեքշաբթի որը մեր բաղդն են վճռում: Կ'ընդունվի՞ արդյոք այս անգամ ընդհանուր ներումը»:

Դժբախտները սիրտները թեթևացնում են իրենց զայրույթը թափելով իրենց տառապանքների իսկական պատճառների վրա, վորոնք տանջում են նրանց պառավ մայրերին, նրանց յեղբայրներին ու զավակներին: Ըմբոստության վոգին համակել ե բանտը... Ավա՛ղ, այդ միայն խոսքեր ու աղաղակներ են: Դռների փակերը դղրդում են: Ավագը կանչում ե վերակացուներին, վորովհետև ինքն անզոր ե հանդարտեցնելու բոլրօքված ընկերներին: Սկսվում ե դատաստանը:

Դուրս են կանչում յերեք—չորս պատահական կալանավորի. նրանց վեր են կացնում անկողիններից, և վերակացուները սրտնեղած, վոր իրենց հանգիստը վրդովել են, պատժվածներին արգելափակում են նախասրահ

մինչև կարգապահական դատի ուր: Այսպես հաճախ պատժում են անմեղներին, վոր շարունակ լուռ են յեղել: Մեկ չե՞ արդյոք նրանց համար: Պետք է պատժել ում և իցե վորպես ուրինակ, մյուսներին վախեցնելու համար...

Կամաց-կամաց լուսթյուն է տիրում, և կալանավորներն աշխատում են քնել: Անհանգիստ քուն, վոր ընդհատվում է մղձավանջներով կամ վերակացունների հաճախակի շրջագայություններով, նրանց կոշիկների դուրսդնումն ու բարձրաձայն խոսակցություններով:

Տաք կլիմա ունեցող վայրերի բանտերում քնելն անկարելի յե գրեթե ամբողջ տարին: Իմ նիմի հռչակավոր բանտումն յեղած ժամանակը միայն մի անգամ սենյակների ախտահանություն արին կամ, ավելի ճիշտ, ախտահանության նման մի բան: Հենց պառկում ես մահճակալի վրա թե չե՞ անթիվ անհամար մլուկներ մարմինդ են պատում, իսկ առաստաղից կույտ-կույտ դլխիդ են թափվում: Ինչպես ել վոր փաթաթվես վերմակով, փրկություն չկա: Սավանները փոխում են յերկու ամիսը մի անգամ, իսկ ներքնակներն ու վերմակները դուրս չեն քցվում բանտարկության ամբողջ ժամանակի ընթացքում: Կլերվոյում ընկերներից մի քանիսը յոթ տարվա ընթացքում միևնույն վերմակներովն եյին ծածկվում, վոր այդ ամբողջ ժամանակն արևի յերես չեյին տեսել: Յեթե բանտումը համաճարակ չի լինում շարունակ, այդ պարզապես բացատրվում է նրանով, վոր թույլ որդանիզմները չեն դիմանում և չուտով մեռնում են: Այն ել պետք է նկատել, վոր Կլերվոյում առողջապահական տեսակետից ամենավատ սենյակները տրվում են դիմավորական դատարանների դատապարտածներին: Այսպես, ուրինակ, իմ իմբին առանձին պատիվ արին, տեղավորեցին ներքին հարկում, ամենախոնավ և ողն ամենից քիչ մաքրվող սենյակներում, և այդ պատճառով մենք ամեն-

քըս ել տառապում եյինք հոգացավից: Չար դիտավորությունն այս դեպքում աներկբայելի եր, վորովհետեւ մյուս, հարմարեցրած սենյակներն ազատ եյին մնացել: Առավոտվա դեմ անքնությունից ու մղձավանջներից տանջված կալանավորներն ընկղմվում են այնպիսի խոր քնի մեջ, վոր նույնիսկ բանտի դանդի ձայնը նրանց չի զարթեցնում: Ավագն ստիպված ե լինում յերկար թափել վոտով սենյակի դուռը, վորպէսզի զարթեցնէ խեղճերին: Սթափուլելուց հետո կալանավորը դժվարությամբ վեր ե կենում տեղիցը, հավաքում ե ներքնակը և սկսում ե մեղրամոմով օրքել յուր վանդակի հատակը, մինչեւ վոր իրեն կանչեն բանելու: Յեւ ահա նորից սկսվում բանտի սովորական օրը—տանջանքների և անհուն թախծի օր:

ԴԱՏ ՅԵՎ ՏԱՆՋԱՆՔ

Բանտի կանոնների ամենափոքր խախտման համար, —կանոնների, վորոնց սակայն առաջուց չեն ծանոթացնում կալանավորներին,—նրանց հանձնում են կարգապահական դատի: Ամենափոքր բողոքի, վերակացուի վրա քցած մի ծուռ հայացքի համար հանցավորին իսկույն փակում են նախապէս արգելարանում, վորտեղ նա քաղցած ու ցրտից տանջվելով յերբեմն անց ե կացնում մի քանի օր, մինչեւ դատարանի վերջնական վճիռը:

Կարգապահական դատարանը փաստորեն միշտ մեղադրական վճիռ ե անում, իսկ նշանակված պատիժը կախված ե վոչ թե հանցանքի ծանրությունից, վոր հաճախ մինչեւ անդամ մտացածին ե լինում, այլ մեղադրյալի վարքացուցակից կամ պարզապէս բանտապետի—գերագույն դատավորի քմահաճույքից: Մի անդամ դատապարտվելուց հետո կալանավորն ել տուգանավորներէ՛ կարգիցը դուրս չի գալիս, և պատիժներն աճող պրոպ-

բեասիայով թափվում են նրա վրա, մինչև վոր մահը խլում է տառապյալին իրեն շարժարողների ձեռքից...

Չկարծե՛ք, ընթերցողներ՝, թե սրանք բացառություններ են: Կլերվոյի բանտում ամեն ոք մի շարք ընկերներ այսպիսի հալածանքի յեն յենթարկվում: Մեղադրյալներին կարգապահական դատարանի սրահն են տանում նիստը բացվելուց մի ժամ առաջ. այնտեղ նրանք վտարորդի, գլուխները բաց մնում են անհարժ կանգնած մինչև դատավորների գալը, վորոնք միշտ ուշանում են: Վերջապես, այդ խեղկատակ տրիբունալը գալիս է. անդամներից մեկը հապճեպով կարգում է ամբաստանագիրքը: «Ի՞նչ կարող եք ասել ձեզ արդարացնելու համար»: Յեթե մեղադրյալը լուռ է, մեղադրական դատավճիռ են կայացնում. յեթե առարկում է, պատիժը սաստկացնում են հանդուգն վարքի համար: Սակայն պատիժների աստիճանավորությունը բավականին սահմանափակ է. արգելք լրացուցիչ ուտելիքեն գնելու, միայն հաց ու ջուր տալը, արգելարան, կարգապահական բաժանմունք: Յեթե մեղքը պետական վորևե գույք կամ արտադրության նյութ փչացնելն է, պատիժը կարող է սահմանափակվել դրամական տուգանքով, վոր շատ անգամ նշանակվում է վորպես լրացուցիչ պատիժ այլ կարգապահական պատիժների հետ: Տուգանքը նշանակվում է բանտի բյուդժեյի քրոնիքական բացը ծածկելու նպատակով, վորի պատճառը աշխատավարձի խիստ աննշան չափն է և բանտի վարչության շարարկությունները: Այդ մի ապորինի միջոց է, վոր սակայն Կլերվոյի բանտի բռնապետը գործադրում է լայն չափերով, տուգանելով ըստ քմահաճույքի: Իմ աչքի առաջ նա մի որում այդպիսի տուգանքներ նշանակեց մինչև իննսուն Ֆրանկ...

«Հաց ու ջուր» տալն այն պատիժն է, վոր կալանավորին վորոչ ժամանակի ընթացքում վոչ մի կերակուր

չեն տալիս, բացի հացից: Այս պատիժը կիրարկելու խստության կողմից առաջնության պատիվը պատկանում է պետական հին բանտին, վոր այդ պատիժը նշանակում է առանձին ժամանակաշրջաններով, յուրաքանչյուրը 6 օր: Որական 9 ժամ աշխատանք և ընդամենը 600 դրամ հաց: Ըկերները տաք կերակուր են ուտում, այդ տեսնում է կալանավորը, և Տանտալոսի տանջանքներին ավելանում է հոգնածությունը, վորովհետև պատրժվածը ճաշի համար նշանակված կես ժամը կանգնած պիտի մնա, յերեսը դեպի պատը, ձեռները կրծքին խաչած: Մի անգամ Նիմուսն առիթ ունեցա տեսնելու, ինչպես մի այդպիսի դժբախտի մերժեցին նույնիսկ մի բաժակ ավելի ջուր տալ:

Սակայն այս համեմատաբար «թեթև» պատիժը սակավ է կիրարկվում. բանտապետները համոզված լինելով, վոր միայն կոպիտ բռնությունը կարող է ուղղել դատապարտյալներին, միշտ ավելի ծանր պատիժներ են նշանակում:

* *

*

Թող Ֆրանսիայի բանվորներն իրենք դատեն, թե վորքան պատշաճ է, վոր այս ինքվիզիտորական դատարանի նիստերի դահլիճում, վորտեղից տասնյակ տարիների ընթացքում հարյուրավոր դժբաղդներ են անցել՝ սրտամաշ վշտով իրենց համար պատրաստված տանջանքներին սպասելով, — վոր այս դահլիճում կանգնած է Ֆրանսիական Հանրապետության կիսարձանը՝ գլխին փոյուղական գլխարկ, վոր հեղափոխական ազատության խորհրդանշանն է . . .

ԻՆՔՎԻԶԻՑԻԱ

Ինչպես արդեն ասացի, տուգանքն ու տաք կերակրից զրկելը դեռ ամենաթեթև պատիժներն են, այնպես վոր այդ պատիժներին յենթարկվողներն ուրախ են լի-

նում, վոր այդպէս հեշտ են պրծնում: Սովորաբար տա-
րարախտ մեղադրյալներէ գլխին ավելի ծանր պատիժ-
ներ են թափվում—արգելարան կամ կարգապահական
բաժանմունքը, վոր ամենասոսկալի տանջավայրեր են,
ուր խիստ դադտնաբար աներևակայելի անգթություններ
են տեղի ունենում, չափազանց բազմատեսակ՝ նայելով
բանտապետի բնավորութեանն ու հնարագիտութեանը:

Կարգապահական բաժանմունքը կապչեցնէ ամեն
մի կողմնակի գիտողի: Այդ մի դատարկ քառանկյունի
դահլիճ է, վորի մի կողմը ծածկված է յերկաթե ծանր
վանդակով: Վանդակի առաջին կանգնում է վերակացուն,
վոր նրանով պաշտպանված է վորեւէ բռնությունից համ-
բերությունները հատած տանջանքի յենթարկվողներէ
կողմից: Հատակի վրա կանոնավոր շարքերով փոքրիկ
սյուներ են տնկված 20 սանտիմետր տրամագծով և 60
սանտիմետր բարձրութեամբ: Առավոտյան ժամը 7-ին
այս դահլիճն են բերում դատապարտյալներին: Նրանք
բանտի սովորական հագուստով են, առանց գլխարկի, բո-
րիկ վոտներին փայտե կոշիկներ: Դահլիճ մտնելիս նրանք
իրենց բաժին հացը դնում են մի հատուկ արկղի մեջ և
ապա ձեռները կրծքներին խաչած սկսում են քայլել յեր-
կար շարքով՝ մի բոպէյում 120 քայլ անելու արագու-
թեամբ: Այսպէս քայլում են քառասուն բոպէ, վորից հե-
տո՝ ավագի տված նշանով ամենքը նստոտում են սյուներ-
ի վրա հանգստանալու, կրունկները սյունին սեղմած,
ծնկներն իրար կպցրած, ձեռները մեկնած ազդերների յեր-
կարութեամբ, գլուխները բարձր պահած. այսպիսի դիր-
քով նրանք բոլորովին անշարժ նստած պիտի մնան 10 բո-
պէ. մի քանի վայրկեանից հետո նրանք միայն մի բան են
ցանկանում, վոր շուտ վերջանա այսպիսի «հանգստի»
համար վորոշված ժամանակը:

Այսպիսի տանջանքի յերկրորդ որը վոտները բորբոք-
վում են, նրանց վրա բշտիկներ են գոյանում, չորրորդ

որը վտաններն արդեն արյունլի ա յեն ու ցաւն ան-
տանելի: Իսկ քայլելն ա յնուամենայնիւ շարունակվում
է: «Ձեմ կարողանում», — տնքում է խեղճը: «Սուտ է», —
դռում է վերակացուն: Յեւ խեղճը՝ սայթաքելով և ու-
ժասպառ շարունակում է: Քայլել մինչև վոր միանգա-
մայն թուլացած դուրս է գալիս շարքիցը, ա յնուամենայ-
նիւ փորձելով հասնել ընկերներին: «Ա՛, չե՞ս կարողա-
նում. ուրեմն հանգստացի՛ր»: Բայց կես ժամ սահմանված
դէրքով «հանգստանալուց» հետո նա արդեն ինքն է
թուլլալով թյուն խնդրում միանալու քայլողներին. նո-
րից յուր տեղն է գրավում շարքի մեջ, կաղալով, յերբեմն
մինչև անգամ լալով անտանելի ցավից...

Կարգապահական բաժնի կողքին, վորտեղ ամբողջ
որը քայլող կալանավորներին փայտե կոշիկներն դուրս
է լսվում, կա մի ա յլ տանջարան, — արգելարանը: Սոս-
կալի՛ կառուցվածք. ամեն մի արգելարանում, վոր կըրկ-
նակի դուռ ունի, — մեկը փայտե, յերկաթապատ, իսկ
մյուսը՝ յերկաթե ցանկապատ, ինչպես վոր վայրի գա-
ղաններն վանդակներինն է լինում, — տեղավորվում է մի
կալանավոր: Այստեղ պատժվածը ինչպես վոր դադաղի
մեջ լինի. առաջին բռնկներն կատաղությունը փոքր առ-
փոքր անցնում է, և մի մոայլ հուսահատություն է տիրում
մարդու հոգուն: Կալանավորն սկսում է պտտվել յուր
սենյակում ինչպես դադանը վանդակում, վորպեսզի մո-
ռացվի. նա չի կարող կանգ առնել, վորովհետև ստիպված
պիտի լինի նստել քարե հասակի վրա: Իսկ ձմեռը հենց
ցուրտն է կալանավորին մղում առաջ, թափանցելով նրա
մարմնի մեջ, վոր միայն մի թեթև կտավե զգեստով է
ծածկված: Տաքանալու համար կալանավորն ստիպված է
լինում արագ-արագ ման գալ, մինչև անգամ վաղելնեղ
սենյակում. և ա յնուամենայնիւ, յերբ հոգնածությունն
ստիպում է նրան կանգ առնել, ամբողջ մարմինը դողում

և սառն ողի հոսանքի տակ, վոր սենյակն և մտնում միշտ
բաց պատուհանից:

Առավոտյանը կալանավորը յուր բաժին հացը հավա-
սար մասերի յե բաժանում, բայց սովորաբար մինչև կես-
որ ամբողջ բաժինն արդեն կերված և լինում մինչև վեր-
ջին փշուրը, և այնուհետև կեսորվանից սկսած՝ քաղցը
մոռանալու համար նա սկսում և պտտվել սենյակում, ծա-
մելով ամեն բան, ինչ վոր ձեռն և ընկնում—փայտի կտոր
կամ մի պատառ շոր: Յերեկոյան ժամի վեցին, սուլիչի
նշանով ամենքը պետք և շորները հանեն և սպասեն, վոր
վանդակը բացվի, իրենց հաղուստը տան և անկողին ստա-
նան: Հենց այս ժամանակն և, վոր սկսվում և բանտար-
կյալների ծեծը: Ավագը, հարբած լրտեսության ու մատ-
նության պաշտոնը յեռանդով կատարելու համար վե-
րակացուններիցն ստացած դինուցը, ման և գալիս սե-
նյակները, և մինչ կալանավորն շտապում և հանձնել յուր
հաղուստն ու ընդունել անկողինը, այդ ստորաքարչ ծա-
ռան մի հայացքով դիտում և սենյակը: Քիչ և պատա-
հում, վոր դնությունն առանց նկատողության անցնի.
կամ հատակը լավ չե սրբած, կամ հատակի վրա ավազի
փշրանք և թափված, կամ վորևե գրություն և նկատում
պատի վրա, վոր շատ տարիներ առաջ և արված. միշտ
առիթ և լինում դժգոհություն կեղծելու: Նախ նա հի-
շոցների մի տարափ և թափում, վոր կալանավորն ստիպ-
ված և լսել անշարժ կանգնած, մի շտպիով, ձեռները
կախ. հետո սկսում և ապտակներ հասցնել և վերջապես
հարվածներ և, վոր հասցնում և վոտներով, բռունցքնե-
րով, մտրակով, կողքերին ու մեջքին: Յերբեմն ավագին
ողնության և հասնում և վերակացուն:

Յես վկա յեմ կանչում իմ ընկեր նավագներին, վո-
րոնք ինձ հետ փակված են յեղել մեկուսացրած Տուառի
բանտի արգելարանում, վորտեղ այդ սարսափելի տեսա-
բանները կրկնվում և յին գրեթե ամեն յերեկո և ամեն ա-

ռավոտ, իսկ ծեծի յենթարկվողներին հառաչանքները դահիճների յեռանդն եյին միայն բորբոքում: «Ողնե-
ցե՛ք» հուսահատ աղաղակները լսվում եյին արգելարանի
խոնավ ողի մեջ, սարսափ աղղելով բանտարկյալներին,
վորոնք ահ ու դողով սպասում եյին ավագի մոտենա-
լուն:

Զինվորական դատարանի դատավճռով պատիժ
կրող մի կալանավոր, վորին արգելարան եյին նստեցրել
խոսելու համար, արհեստանոցները վերադարձավ ամ-
բողջովին կապուտած տեղերով ծածկված: Բայց յերբ
նա գանգատվեց այդ ծեծի համար բժշկին, սա պատաս-
խանեց, թե կարգապահական միջոցներն իրեն չեն վերա-
բերում... Մի անգամ յերկու կալանավոր վճռում են զո-
հել իրենց և սպանել ավագին: Այդ չհաջողվեց, բայց
նրանցից մեկը մեռավ արգելարանում ծեծից, իսկ մյու-
սին տեղափոխեցին Սեն-Մարտեն դը-Ռե անհուսալի վի-
ճակի մեջ:

Ինքվիդիտորական յեղանակները չափազանց տա-
րածված են կենտրոնական բանտերում: Հրահանգին հա-
կառակ, վորով կալանավորներին շղթայելը թույլ ե
տրվում միմիայն բացահայտ ապշոպի դեպքում, բան-
տապետները շարունակ կիրարկում են ճնշման այս մի-
ջոցը, հաճախ՝ կալանավորից, նրան տանջելով, խոս-
տովանուլթյուն կամ ընկերի մատնուլթյուն կորզելու հա-
մար: Ամեն յերեկո դատապարտյալի ձեռները յերկաթե
ապարանջանով շղթայում են մեջքին և այսպես թողնում
ամբողջ գիշերը: Մի անգամ Տուառում տեսա, վոր
ստիպված եյին խարտոցով սղոցելու ձեռնաշղթաները,
վորովհետև գիշերը կալանավորի ձեռներն այնպես եյին
ուռել, վոր ապարանջանները հանելու հնար չկար: Բացի
սրանից՝ շղթայվածին սովորաբար ծեծում են, այնպես
վոր դարձանալի չե, վոր վերջիվերջո նրան ստիպում են

Թշուաճության համար ցանկալի խոստովանություններ
անել:

* * *

Տաժանակիր աշխատանքներից ազատված ընկեր-
ներ, հիշո՞ւմ եք արդյոք ինձ նման այն սոսկալի տան-
ջանքները, վոր տեղում եյին ամբողջ անքուն գիշերներ:
Յեթե այո՛, ապա հարցրե՛ք ինքներդ ձեզ, թե արե՞լ եք
արդյոք ամեն բան, ինչ վոր կարող եյիք անել ձեր այն
ընկերներին ազատելու համար, վորոնք դեռ տառապում
են բանվոր դասակարգի անհաշտ թշնամիների ճիրաննե-
րում:

«ԴՐԱՆՏ».

Կալանավորի համար ավելի մեծ յերջանկու-
թյուն չկա, քան հիվանդանոց ընկնելը: Ի՞նչ բան է հի-
վանդության պատճառած ֆիզիքական տանջանքը այն
պատրանքի հանդեպ, թե համեմատական ազատություն
ես վայելում:

Վաղ առավոտվանից հիվանդների յերկար շարանը
կանգնած է յերթեկներին բուժարանի դռան առաջ: Նը-
րանք անհամբերությամբ սպասում են իրենց հերթին:
Վոմանք, այտերը կապած, ատամնացավից են տառա-
պում, մյուսներն այլանդակված դեմքով, փորները բըռ-
նած, գալարվում են ցավից—պոտասի է չկայեկած ա-
նոթների հետևանքից. վոմանց ել ձեռներն է փաթաթած
թաթերով: Յեվ նրանցից ամեն մեկը, չնայելով յուր տա-
ռապանքին, մի յերազ, մի հույս է տածում—ընկնել հի-
վանդանոց, այդ կալանավորի յերկրավոր դրախտը:
«Յերկուսը դուրս են յեկել, մեկն յերեկ մեռել է. յերա-
նի՛ թե այդ յերեք տեղերից մեկն ինձ վիճակվեր»: Յեվ
պետք է գիտենալ, վոր ամենքն ել՝ բանտումը յերկար

մնալով, լավ գիտեն, թե ի՞նչպես եւ ընդունելու իրենց
բժիշկը:

Բժիշկը ներս եւ գալիս, ինչպես փոթորիկ: Նա միշտ
շտապում եւ, վորովհետեւ այս ընդունելությունը քիչ հա-
սույթ տվող մի գործ եւ, վորից պետք եւ շուտ ազատվել:
Հենց վոր բժիշկը նստում եւ յուր տեղը, վերակացուն
սկսում եւ հերթով դուրս կանչել կալանավորներին, տա-
լով ամեն մեկի բնութագիրը, վորից բժիշկը կարողա-
նում եւ իմանալ, թե ինչպես եւ վերաբերվում բանտի իշ-
խանությունն այս կամ այն կալանավորին: «Յող: Կոմ-
պրես: Դու առողջ ես. եւ քեզ չտեսնեմ ընդունելության
ժամանակ», արտասանում եւ բժիշկը: Ամեն որ գոնե մեկը
լինում եւ, հյուժված դեմքով, գունատ, վոր հազիվ եւ
կանգնում վոտի վրա եւ ընկերների ոգնությամբ եւ գալիս
բժշկի մոտ: Դա նոր եւ դուրս յեկել արգելարանից, 45,
60 եւ 90 որ փակված լինելուց հետո, հաճախ 30 գիշեր
շղթայակապ անցկացրած: Նա խնդրում եւ, վոր իրեն հը-
նարավորություն տան գեթ չորս որ հանգստանալու հի-
վանդանոցում: «Հանգստանա՞լ: Քի՞չ ես հանգստացել
արգելարանում: Գնա՛, դնա՛ եւ եւ աչքիս չերևաս, յեթե
չես ուզում վերադառալ այնտեղ, վորտեղից յեկել ես»:
Յեվ յերեւալով հեռանում եւ թշվառականը:

Ժամանակ առ ժամանակ բժիշկը վորեւ պալար եւ
ճղում կամ փորձում եւ ատամ քաշել ու կոտրում եւ: Քա-
ռորդ ժամումն ընդունելությունն ավարտում եւ, բոլոր
հիվանդներին նայում արձակում եւ: Համբաքայլ, գլխա-
կոր գնում են նրանք դեպի արհեստանոցները, կրկնակի
տանջվելով նրանից, վոր իրենց տառապանքներին կա-
րեորություն չտվին, վոչ մի կարեկցություն չտեսան:
Նախանձով են նայում այն սակավաթիվ բաղդավորնե-
րին, վորոնք հիվանդանոց են ընկնում:

Բայց իրոք նախանձելի՞ յե արդյոք նրանց վիճակը:
Նրանց տասից ինն արդեն մահվան են դատապարտված:

Մելոնի կենտրոնական բանտի հիվանդանոցն ընկնողն այնտեղից կենդանի չի դուրս գալիս. մի քանի բժիշկ այդ սխառեմ են դարձրել: Մի անգամ յես լսեցի, թե ի՛նչպէս Ռիոմի բանտի բժիշկը մի կալանավորի ասաց. «Հոգնե՞լ ես: Բանտ պիտի չնկնեյիր: Յես քեզ հիվանդանոց կընդունեմ այն ժամանակ, յերբ դու մեռնելու լի-նես»:

Հիվանդանոց մտնելն արդեն զգալի դժուրություններ ե տալիս: Այնտեղ վորոշված աշխատանք չկա, չկան հսկիչներ, վերակացուներ: Թեպետ յերբեմն հսկողությունը տեղի յե ունենում խիստ դայրացնող ձևով, բայց այնպիսի վտանգներ չի սպառնում, ինչպէս բանտումը: Ի՛նչ յերջանկություն ե լավ մահճակալի վրա պառկել, ստանալ հիվանդանոցի, յերբեմն նույնիսկ հավելյալ սընունդ, վոր բավական չե մինչև անգամ սովորական յերեխայի համար, բայց վոր ամեն մի բանտարկյալի դատարոնոմիական գերագույն փափագն ե—որական մի կտոր միս ե մոտավորապէս մեկ քառորդ չիչ գինի: Խընամք չկա գրեթե բնավ: Ի՞նչ փնտս: Բայց հո կարելի յե ազատ գրույց անել, մտքեր ու զգացմունքներ փոխանա-կել:

Կլերվոյում բանտարկյալների թիվը շատ լինելու պատճառով հիվանդանոցն ել ընդարձակ ե, հատուկ բաժանմունքներով՝ զանազան տեսակ հիվանդություն-ների համար: Մի քանի ամիս առաջ ինձ հաջողվեց մտնել Թոքախտավորների բաժանմունքը՝ մի տուլուղցի ընկե-րոջ հետ տեսնվելու համար, վոր հիմա վախճանված ե: Յես տեսա կիսակենդան մարդկանց ուրվականներ: Ա-վա՛ղ, այս բաժանմունքից, ինչպէս Ռիոմի ե Մելոնի բանտերի հիվանդանոցներից, կենդանի չեն դուրս գա-լիս: Ով վոր այս հիմնարկության շեմքիցն անց ե կենում, պիտե, վոր ել տեսնելու չի յուր հարազատներին: Այստեղ ել պիտի մեռնի յերեսը պատուհանին արած, վոր փակած

ե ծանր վանդակով (կարծես թե հիվանդները պիտի կարողանան պատուհանը ջարդել) : Այսպես պատկած են նրանք, վորոնց բուրժուական անխնա արդարադատությունը հանձնել է յուր արժանի դաշնակցի, բանտերի տեր ու թագավոր տուրքերկուլոյի ձեռքը : Անցած գիշեր մեռել է նրանց ընկերը, և նրանք ականատես են մի տրխուր տեսարանի, յերբ կոպիտ ու առանց ակնածության վերցնում են նրա հողեղեն նշխարները՝ դիահատության սրահն ուղարկելու համար : Ո՞ւմն է լինելու առաջին հերթը :

Մի անգամ յերեկոյանը մի ցնցող տեսարան տեղի ունեցավ : Նրանց սենյակի պալատի պատուհանի վանդակի վրա մի բու թառեց : Նրա չարագուշակ ճիչը սարսափ եր ազդում թշվառ հիվանդներին : Նրանք գլուխները ծածկում էյին վերմակներով, աշխատում էյին չլսել նրա ձայնը : Վերջապես հիվանդներից մեկը վեր թռավ անկողնիցն ու մոտեցավ պատուհանին : Ով վոր միայն կարող եր տեղիցը վեր կենալ, հետեցին նրա որինակին և սկսեցին քշել թռչնին. «Կորի՛ր : Մենք չենք ուզում մեռնել, մենք ապրել ենք ուզում» : Յերբ հանդստացան, սկսեցին խոսել. յենթադրություններ էյին անում, թե ո՛ւմ մահն եր գուշակում բուն ամենից առաջ...

Յերեկոներն այս վորևե փոփոխության ծաղավի փոքրիկ աշխարհն ամեն տեսակ նորություններ եր ներս թափանցում : Գրեթե ամեն գիշեր ընկնավորությամբ, ճահճատենդով կամ սուր սակավարյունությամբ հիվանդացած կալանավոր են բերում : Յերբեմն միանգամայն անակնկալ կերպով ննջեցյալներ են բերում, ինչպես, որինակ, Սեն-Մարտեն դը-Ռեում բանտարկված Գուվեռնեկ նավազին, վորի գիակը հիվանդանոց էյին բերել, միմիայն նրա համար, վոր նրա մահվան արձանագրությունը գրվեր հիվանդանոցի մատյանի մեջ, իսկ

մեռել էր նա արգելարանում, վորտեղ շղթայված է յեղեղ բոլորովին մերկ՝ բժշկի կարգադրությամբ, վոր նրան հիվանդ ձևացող էր համարում: Կլերվոյի բանտի հիվանդանոցումն առհասարակ մեծ կենդանություն կա. գրեթե ամեն շաբաթ այնտեղ նոր հիվանդներ են մտնում՝ մատները կամ մինչև անգամ ձեռները կտրված, արհեստանոցների մեքենաների վատ սարքված լինելու հետևանքով:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ...

... Հիվանդանոցի սենյակների լուսության մեջ անդադար դրույց են անում: Արդեն սպառված են արհեստանոցների ամենորյա կյանքի վերաբերյալ նյութերը, սպասվող ընդհանուր կամ մասնակի ներման վերաբերյալ յենթադրությունները: Խոսակցությունն աննկատելի կերպով անցնում է հիվանդներից մեկի վիճակին, նա սպառված է սենյակի հեռավոր անկյունումն ու չի կարող նրանց լսել: Ավելի ու ավելի աճող թախծով նորեկը քիչ-քիչ կարդում է յուր ընկերների հիվանդության թերթերը: Նրանց գուշակություններն, ավա՞ղ, արդարանում են գրեթե ամեն որ նրանով, ինչ վոր անում է մահը: Ամեն վոք, վոր յերկու-յերեք շաբաթից ավելի յե սպառվում հիվանդանոցում, արդեն անբուժելի, մահացու հիվանդության սաղմն ունի յուր մեջ:

Յեթե հիվանդի հիվանդանոցում մնալը յերկարում է, նա սկսում է նկատել, վոր ինքը ընկերների խոսակցությունների առարկա յե դառնում. խոսակցությունները նրա ներկայությամբ հանկարծ լուծվում են, ընդհատվում կամ փոխվում: Յեվ ահա նա սարսափով դգում է, վոր մահը մոտենում է, այն ազատությունը, վորից նա սոսկում է: Արդեն սկսում է հասկանալ, վոր ել տեսնելու չէ հայրենի վայրերը, յուր սիրելիներին, հարա-

դատներին: Նա արդեն գիտե այն ճանապարհի բոլոր մանրամասնությունները, վորով վիճակված է իրեն հեռանալ այն սոսկալի, անիծված վայրից, վորտեղ ուղարկել է նրան դասակարգային անգութ արդարադատությունը:

Ահա բուժակը հայտնում է, վոր այս ինչի ազդականներին հեռագիր է ուղարկված: Յեւ վամենքը մի տեսակ թեթևություն են զգում: Բայց սովորաբար չափազանց ուշ է լինում, և յերբ պառավ մայրը, յեղբայրը կամ քույրը գալիս են, յերբեմն Ֆրանսիայի հակառակ ծայրից, նրանք արդեն այն անբաղդին կենդանի չեն գտնում:

1922 թ. սկզբում Կլերվոյում մեռնում էր մի յերետասարգ մարտիկ: Նա դատապարտված էր բանտարկության տասը տարով մի քանի ժամ դասալիք լինելու համար և մեռնում էր թոքախտից՝ չնորհիվ Կլեմանսոյի մտցրած տխրահռչակ ուժի մի խստության: Սակայն նախարարության վերջին կարգադրության համաձայն՝ նրան պիտի ազատած լինեյին. բայց հերթը դեռ նրան չէր հասել:

«Հիմա ել շատ չի մնացել», առում էր նրան յեղբայրը, վոր կանչված էր հեռագրով և շտապել էր դալու: «Ա՛խ, ի՛նչ յերկար է քաշում: Բանտի վարչությունը շատ ել չի շտապում», — առարկում էր հիվանդը: «Կը տեսնես, ի՛նչ սիրունացել է մեր քույրը: Նրա խնամքն ու մեր հարավային արևը կառողջացնեն քեզ»: — Վո՛չ, յես ել քրոջս տեսնողը չեմ: — Այսպես խոսակցում էյին յերկու յեղբայրները. նրանց խոսակցությունն ընդհատվում էր հեկեկանքներով: գրկախառնվում էյին և լալիս: Սենյակում ներկա յողոզները բոլորն ել արտասվելու չափ զգածված էյին: Բայց ահա թույլատրված կես ժամվա տեսակցությունը վերջացավ, և վերակացուն անջատեց յեղբայրներին միմյանցից, ընդհատելով

նրանց խոսակցութիւնը: Այդ բոլեյին այս սրտաշարժ տեսարանի վկաներից մեկը, մի ծեր գինւոր, վոր նույն մահացու հիվանդութիւնիցն եր տառապում, գունատ է նիհար, կանգնեց յուր անկողնի վրա՝ սավանով փաթաթված, վորպէս մի ահավոր ուրվական, և մատնացույց անելով մեռնող պատանուն՝ բացագանչեց.

«Ո՞ւր են հապա չարագործները, վոճրագործներն ու ավաղակները: Այստեղ թե՞ Փարիզում, ձեր տերերի պալատներում»:

Հյուրը գնաց, և մինչ գնացքը նրան տանում եր դէպի հարավային Փրանսիայի ջինջ յերկինքը, նրա յեղբայրը մեռում եր դառնաշունչ ոտարութեան մեջ...

Միտ բերե՛ք Բեզբուի գինւորի սրտաշարժ վախճանը: Խեղճի դիակը, վոր անճանաչելի յեր նույնիսկ մոր համար, և վոր նրան վերջիվերջո ցույց ել չտվին, ծածուկ բերել եյին հիվանդանոց: Նրա յերեսը, ատամները թափած, ուռած, կապուտած տեղերով, մի անկերպարան զանգված եր դարձել. մարմինն ամբողջ մի վերք, կուրծքը ջարդված: Իսկ դիագնոստիկայան արձանագրութիւնը վկայում եր, իբր թե մահն առաջացել եր մի քանի անգամ բարձր տեղից վայր ընկնելուց՝ բանտիցը փախչելու անհաջող փորձ անելիս: Արդարադատութեան նախարարութիւնը հրամայել եր քննութիւն կատարել, և ամեն բան քցեցին բանտի ավազի վրա՝ «ազնիվ» վերակացուներին պաշտպանելու համար: Գործն այդպէս ել խեղդեցին: Մի վճռական միջոց անհապաղ ձեռք առնվեց. բանտում պահակութիւն անող գինւորներին փոխարեն բանտի հատուկ պահնորդներ նշանակեցին, վոր վստահելի յեն և պակաս շատախոս: Ի հարկե, մարդասպաններից վոչ վոքի դատի շմատնեցին:

Կլերվոյում մեռածների դիակները տանում են դիահատութեան սենյակը. հին բանտի վրա շարունակ պտըտվող ագռավների յերամն իսկույն իջնում ե այն փոքրիկ

բակը, վորին նայում ե այդ սենյակի միշտ բաց պատու-
հանը, միակը ամբողջ բանտում, վոր վանդակապա-
տնէ։ Յեւ զարմանալի յե, վոր այդ գիշակերները պատառ-
պատառ չեն անում հանգուցյալների մարմինը։ Մարմի-
նը դնում են դադաղի մեջ ե հապճեպով հուղարկավորու-
թյուն կազմակերպում—յերկու կալանավոր, մեկը, խա-
չը ձեռին՝ առաջից, մյուսը՝ ձիուն ե տանում սանձը բռ-
նած, բանտի քահանան ե մի վերակացու։ Յերբեմն դա-
դաղի յետեից մի կին ե գնում, խորին սգով համակված—
հանգուցյալի մայրը, կինը կամ քույրը։

Կլերվոյի բանտը յուր հանգստարանն ունի։ Այնտեղ
հանգչում են այն թշվառները, վորոնց մահն ե ազատել
բանտից, հարյուրավորներն են պառկած կողք-կողքի։
Ճիշտ ե, անձրևներից սևացած յեղևնի խաչափայտի վրա
համարը նշանակվում ե, բայց ժամանակն արագ ե ջնջում
այդ նշանը։

Դասակարգային ատելությունը մինչև անգամ մա-
հին չի խնայում։

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

Մարդ ակամա հարց ե տալիս ինքնիրեն, թե ինչո՞ւ
Փրանսիական հանրապետության բանտերում այնպիսի
տանջանքներ տեսնող մարդիկ փախչելու մեծ գալթակ-
դությանը չեն յենթարկվում։ Բայց մարդ մինչ այն աս-
տիճան ընկճվում ու ճնշվում ե, յերբ յուր բոլոր ջանքերն
ուղղված են մի կերպ գոյություն պահպանելու, ապրե-
լու, հակառակ իրեն շրջապատող ծանր պայմաններին։

Բացի սրանից փախուստի համար հարկավոր ե, վոր
փախչողները խոսքները մեկ անեն, իսկ լրտեսությունը
բանտում այնպես ե կազմակերպված, վոր կալանավոր-
ների միաբանելը գրեթե անհնարին ե։ Բայց զլխավորն
ամենքին տիրող յերկյուղն ե. յերկյուղ վոչ թե պահակի

դնդակից, այլ այն լրացուցիչ պատժից, վոր նշանակելու
յե բռնվելու դեպքում:

Բանտերի վարչության պետը 1923 թ. ապրիլի 11-ի
չրջաբերականով հիշեցնում է յուր ստորադրյալներին,
վոր բանտից փախչելը հնարավոր է միմիայն մի կամ մի
քանի վերակացուների պարտադանցության դեպքում:
Մարդ ժամանակակից բուրժուական պետական գործչի
բթամտությունը պիտի ունենա, վորպեսզի չհասկանա,
վոր պատերազմի բոլոր արհավիրքները տեսած, հիսուն
յերկու ամիս մահվան դեմ հանդիման գտնված մարդը
առանց վարանելու ամենածայրահեղ փորձերն է անելու
բանտից ազատվելու համար, մինչև վոր վերջնականա-
պես կընկճվի բանտի կարգ ու կանոնից: Դժվար չէ նա-
խատեսել այս չրջաբերականի հետևանքները: Ամեն մի
կալանավորի համար պարզ է, վոր փախչելու ամեն մի
անհաջող փորձ մահ է սպառնում իրեն վերակացուների
ձեռքից, վորոնք վրեժ պիտի առնեն նրանից՝ իրենցից
մեկի անհողության պատճառով ստացած հանդիմանու-
թյան համար:

Փախուստի համար հրահանգով պատիժ է սահման-
ված՝ 90 ուր մենակ բանտարկված մնալ, վորից 30 ուրը
արգելարանում: Այս արդեն ինքնին մի սոսկալի պատիժ
է, վորովհետև արգելարանը պատուհաններ՝ չունի, և
բանտարկվածը մնում է կատարյալ մթության մեջ, հա-
ճախ ել մինչև վտտի կոճերը ջրի մեջ:

Ռիոմը, Լոոսը և մանավանդ Մեյոնը հռչակված են
իրենց արգելարանների խոնավությամբ: Մեյոնի արգե-
լարաններում այնքան ջուր է լինում, վոր ամեն շաբաթ
գուրս են տալիս հրչեջ խողովակով: Ամբողջ սնունդը 600
գրամ հաց է և յերեք քառորդ լիտր ջուր որական և շա-
բաթը յերկու անգամ մի աման սառը լվացքաջուր, վո-
րին «սուպ» են ասում: Այս առանց այն ել դաժան ուժի-
մին ավելանում է վերակացուների վրեժ խնդրությունը,

վոր զանազան ձևեր և ունենում՝ նայելով նրանց անհատական հատկություններին: Ամեն ուր, յերբեմն որական մի քանի անգամ, բանտարկվածին սարսափելի ծեծ են տալիս, վռտներով կամ մտրակով:

Չկարծեք, ընթերցող, թե այսպիսի վռճիրները բացառություն են: Վո՛չ, սրանք կանոն են, սխառեմ են: Ֆրանսիայում վոչ մի բանտ չկա, վորտեղ վոր այս չգործադրվեր: Իմ ընկեր ժյուլիեն Վառյուելը, արհեստով կաթսայագործ, վոր պատերազմում կորցրել և մի աչքը, թունավորվել և գաղերով, հակառակ յուր շարքային չլինելուն՝ մասնակցել և 1918 թ. հոգակավոր հառաջխաղացությանը, զինվորական դատի մատնված լինելով՝ մինչև հիմա կենդանի չե միայն մի բաղդավոր պատահականության շնորհիվ: Բանտի սոսկալի կյանքին չգիտանալով՝ նա 1920 թ. մարտի 21 -ին փորձեց փախչել: Նույն գիշերը նրան բռնեցին, բերին միայնակ բանտարկվողներին բաժանամունքը և շղթայեցին, այստեղ այս անպաշտպան, անգոր մարդու վրա հարձակվեցին, բաժանամունքի պետի ղեկավարությամբ, մի խումբ վերականգնուն և սկսեցին հարվածներ հասցնել վռտներով ու յերկաթե բանալիներով: Հետո բոլորովին մերկացրին, ձեռները կապեցին և դարձյալ ծեծեցին: Պատժված կալանավորի հազուստ հազցնելով, ձեռները շղթայած, վռտաբորիկ ստիպում էին վաղ տալ, շարունակ առաջ քշելով աղաղակներով ու հարվածներով: Հրահանգին հակառակ նրան փակեցին մութ արգելարանում 90 օրով: Նրա փախուստի պատճառով հանգիմանություն ստացած վերականգն, ի հարկե, շուտ-շուտ «այցելում եր» նրան: Վերջապես վողորմելին արժանացավ բժշկի այցելության, վոր իբրև գլխացավի և կրծքացավի բժշկություն՝ կարգադրեց վոչ պատուհան և վոչ ողանցք ունեցող արգելարանի պատերը լվանալ քլորակրի լուծվածքով: Հիմք կա յենթագրելու, վոր բժշկության այս տա-

ըորինակ յեղանակը մտածված եր այն անհանդիստ կա-
լանավորիցն ազատվելու համար, վորովհետեւ սենյակի
ողը շատ շուտով բոլորովին անտանելի դարձավ: Պատժի
ժամանակամիջոցը լրանալուց տասնըհինգ որ միայն
առաջ Վառյուռէին տեղափոխեցին այլ սենյակ. այստեղ
նա հանդիպեց նույնպէս փախչելու փորձ անելու համար
պատժված մի ընկերոջ, վոր կորցրել եր խոսելու և ու-
տելու ընդունակութիւնը: Շուտով նա ընկավ հիվանդա-
նոց, վոր ազատարար մահվան նախադուռն ե:

Ո՞Վ Ե ՄԵՂԱՎՈՐ

Յեա աշխատեցի ուրվագծել Փրանսիական բանտերի
ընդհանուր պատկերը: Իմ բերածները ճիշտ, անհերքե-
լի փաստեր են, և հավատացած եմ, վոր նկարագրութեանս
մեջ վոչ միայն չեմ սաստկացրել դույները, այլ մինչև
անգամ բավականաչափ պայծառ չեմ ներկայացրել իրա-
կանութիւնը յուր բոլոր քստմնելի այլանդակութեամբ:
Առանց արդարացնելու մի քանի վերակացուների դադա-
նաբարո վարմունքը, յեա այնուամենայնիվ կամենում
եմ ասել, վոր բանտերում գործվող վոճիրների համար
պատասխանատվութիւնն ընկնում ե արդարադատու-
թեան նախարարութեան ղեկավարների վրա. նրանք վոչ
մի կերպ չեն կարող արդարանալ. միայն դասակարգային
վայրագ ատելութիւնն ե՝ դեպի իրենց ձեռքն ընկած
պրոլետարները, վորով վորոշվում ե նրանց հանցավոր
վարքը:

Անտարակույս, կալանավորին մի ծուռ հայացքի
համար ջարդ ու փշուր անող վերակացուն կոպիտ, ան-
դուլթ անասուն ե: Բայց բանտապետը, վոր յուր առանձ-
նասենյակից սառնասրտութեամբ կարգադրութիւն ե
անում մեղք գործած կալանավորին շղթայելու և լավ
դիտե, թե ի՞նչ հետեւանքներ պիտի ունենա այդ պատի-

ժը, վոր ըստ մեծի մասին տրվում է բոլորովին անմեղ մարդու, — այդ բանտապետը միանգամայն գիտակից դահիճ է:

1924 թ. հուլիսին զինվորական դատարանի դատապարտածներից մեկի մոտ մի սեղանի բանալի յեն գրտնում: Նրան իսկույն արգելարան են ուղարկում յերկու կարծեցյալ մեղսակիցների հետ: Այնտեղ նրանց սովորական տանջանքների յեն յենթարկում — ծեծում են, գիշերները չղթայում են ձեռնաչղթաներով: Իզուր խեղճն այս կողմն այն կողմն է շուռ գալիս անկողնում, այնպիսի դիրք է ուզում տալ յուր մարմնին, վոր կարողանա քնել: Զուր խմելու համար նա ստիպված է շուռ տալ գավաթը և ապա՝ փորի վրա պառկած լկել թափած ջուրը: Այս բոլոր տանջանքները նվիրագործել է բանտապետը. սրանց նպատակն է դժբախտին ստիպել խոստովանվել, թե ի՞նչի համար է յեղել նրա մոտ գտնված բանալին:

Նոյեմբերի 11-ին Նիմի բանտում նույն վիճակին յենթարկվեց մի նախկին նավաստի նրա համար, վոր մոտը մի փոքր ծխախոտ էյին գտել: Միևնույն բանն անում են Մելոնում ու Պուլասիում, վորտեղ բանտապետ Ռոբերը 90) որով արգելարան է նստացնում և պարբերաբար շրջթայում է ամեն մեկին, ում մոտ վոր ծխախոտ են գրտնում:

Ռիոմում բժիշկը լրացնում է վարչության անդթուլթյունը, ըստ յերևութին չափազանց փափկասիրտ համարելով վարչությունը: Այն սա է, վոր հիվանդանոց բնդունում է միայն մահու դատապարտված անբուժելիներին: Ռիոմի բանտն ամենից հակառուղջն է. նրա պատերը յերբեք չեն չորանում: Այնտեղ ել ամենածանր աշխատանքներ են մտցրած: Հին՝ ձեռքի սորքեր կոպիտ կտավ գործելու համար — մի սպանիչ գործիք, վոր ութասպառ է անում նրանց բանեցնող կալանավորներին:

Սեն-Մարտեն դը-Ռեի բանտապետը թանգ է գնահատում իրեն հանձնված հիմնարկության բարի անունը: Այս պատճառով ահա յերկու տարի յե, վոր նա յուր բանտում Տուլոնի հին տաժանակիր աշխատանքների կարգապահությունն է մտցրել: Բոլոր նորեկ կալանավորներին անխնա ծեծում են մտրակներով ու բանալիներով: Հետո նրանց «չամփրի վրա» յեն նստացնում գիշերը, այսինքն՝ վոտներն ամուր կապում են մի յերկաթե ձողից, — մի կարգապահական միջոց, վոր ցայսօր գործադրվում է Ֆրանսիական նավատորմում, — և դրանից հետո միայն քշում են արհեստանոցները բանելու: Վարչությունն այս միջոցներն անհրաժեշտ է համարում կալանավորներին արդարագատության և կարգապահության մասին պատշաճ գաղափար տալու համար: Սրանամիջևական հետևանքն այն է լինում, վոր կերակրելու համար ընդունված կալանավորների ցուցակից մի քանի հոգի հանվում են. հենց այս է խնայող վարչի նպատակը:

1922 թ. սեպտեմբերի 15-ին Կլերվոյի բանտի պարիսպների տակ Որ դեպարտամենտի պրոկետարիատի հսկայական ցույցը պիտի տեղի ունենար: Բանտապետը յերկու շաբաթ ահուղողի մեջ էր: Նա անձամբ զննում էր անձրեւաջրերի խողովակները, վորոնում էր գինամիտի փամփուշտներ ու բրաունինգներ. վոր իրը թե թաքցրած էյին այնտեղ: Որն յերկու-յերեք անգամ մեզ մերկացնում էյին: Ցույցը տեղի չունեցավ, վորովհետև բանտը չըջապատեցին զորքով ութ քիլոմետր տարածության վրա: Բայց Կլերվոյի մռայլ տերը, իրեն պատճառած սարսափիցը կատաղած, բոլոր տաժանակիր բանտերի պետ Լըռուայի համաձայնությամբ Պուլասսիի տուգանավորների բաժանմունքն ուղարկեց 217 զնդի բոլորովին անմեղ զինվոր Ֆիլպենին, վոր դատապարտված էր բանտարկության 20 տարով: Այս վո-

դորմեւուն կլերվոյից շղթայակապ, հին, պատուոված նշանազգեստով, առանց սպիտակեղենի ու տաք շապկի, ուղարկեցին Պուլասսի: Ութերորդ տարին է ահա, վոր նա այնտեղ է: Զինվորական դատարանի վճռով պատիժ կրող յերեսուն ութ ուրիշ կալանավորներ դրանից հետո շուտով ուղարկվեցին Բոլյո: Միանգամայն ապուրի նարար նրանց, վոր բերդարդելության են դատապարտված, այնտեղ յենթաթիկում են մեկուսացրած բանտարկվածների ռեժիմի: Ի՞նչով կարող է պարոն Լըռուան արդարացնել այս անհանդուրժելի իշխանազանցությունը, դատապարտյալների պատժի չափն ըստ քմահաճույքի ավելացնելը:

Մի ավելի քստմնելի դեպք. 15 թնդանոթածիգ բրիգադայի զինվոր Լեսպերը, վորին 156 դիվիզիայի զինվորական դատարանը մահու պատժի էր դատապարտել՝ 1919 թ. Ողեսսայում ռուսական հեղափոխության դեմ զնալուց հրաժարվելու համար, մինչև որս նստած է Նիմի կենտրոնական տաժանակիր բանտում, չնայելով, վոր նրա մահու պատիժը փոխարինված է սովորական բանտարկությամբ քսան տարով:

Բուրժուազիան վերջին շնչումն էլ աշխատում է բռնել այն անդունդի ծայրից, վորի մեջ վորտեղ վոր է՝ պիտի գլորվի: Յուր տիրապետության վախճանը տեսնելով՝ նա, կատաղած, վրեժ է առնում այն դժբաղդներից, վոր դեռ յուր ճիրաններումն են: Պրոլետարիատի պարտականությունն է նրա քստմնելի չարագործություններին ի պատասխան միակ իրական միջոցը դործադրել, այն է՝ զինյալ ապստամբություն կազմակերպել նախ՝ բանտերում տառապող յեղբայրներին ազատելու և ապա՝ այդ հիմնովին փտած իրավակարգը վերջնականապես խորտակելու համար:

ՄԵՐԺՅԱԼՆԵՐԸ.
ՊԱՐԻԱՆՆԵՐ

Դատապարտվածներն և Ֆրանսիական բանտերում բանտարկվածներն մասին ժամանակ առ ժամանակ դեռ խոսում են, բայց վոչ վոքի մտահոգության առարկա չենրանց վիճակը բանտարկությունից ազատվելուց հետո: Ջինվորական ծառայության ժամանակը չլրացրածներին ամենքին վերադարձնում են բանակը, վորտեղ նրանք բաշխվում են հատուկ զորամասերի միջև՝ մինչև նրանց ծառայության ժամանակը լրանալը. այնտեղ նրանց հետ նույնպես անտանելի վատ են վարվում, ինչպես բանտերում: Իրավաբանական տեսակետից նրանք, ճիշտ է, վորոչ քաղաքացիական և քաղաքական իրավունքներից զրկված են, բայց համենայն դեպս նրանց վերաբերյալ դատավճիռն որինական հիմք չի կարող լինել նրանց տանջելու այնպես, ինչպես վոր տանջում են պատիժը կրելուց հետո: Սրա ապացույցն այն որենքն է, վոր նրանց իրավունք է տալիս դատական հետապնդումն հարուցանելու ամեն մեկի դեմ, ով վոր կը հիշեցնի նրանց դատապարտված լինելը:

Բայց զինվորական իշխանություններն այս հաշվի չեն առնում: Կապիտալիստական հասարակության պաշտպան միլիտարիզմը հալածում է նրանց, ով վոր կամա թե ակամա խախտում է այդ դասակարգային հասարակության դասակարգային որենքները:

Պատիժը կրած ու բանտից ազատվածներին ուղարկում են հետևազորի աֆրիկյան գումարտակները, վորոնք գրեթե բոլորն ել գտնվում են գեներալ Լիոտեի հրամանատարության տակ: Մեկուսացրած բանտարկության, բերդարգելության կամ տաժանակիր աշխատանքների դատապարտվածներն, այսինքն՝ զինվորական դատարանների դատապարտածների ահագին մեծամաս-

նությունը, ազատվելուց հետո ուղարկվում են տուգանավորների գումարտակները, վորովհետև նրանք իբր թե արժանի չեն դենք կրելու:

Ի նկատի ունեցե՛ք, վոր թեպետ նրանք արձակված են դորքի շարքերից, այնուամենայնիվ նրանց զինվորական-դատական վարչության յենթակա դորամասերն ուղարկողը նույն զինվորական իշխանությունն է:

Տուգանավորների կենտրոնացման վայրը Կոլլիուրն է (Արևելյան Պիրենեյների դեպարտամենտում): Ազատվածներն ու ներքեմն ստացածները գալիս են այստեղ արդեն բազմամյա տառապանքներից զայրացած: Այն ինչ՝ կարդապահական ճնշումներն սկսում են թափվել նրանց գլխին: Արձակուրդ չի տրվում վոչ մի որ, նույն իսկ վոչ մի ժամ: Դասալքության համար վեց տարի բերդարդելություն քաշած զինվորին մի ամենակարճատև արձակուրդ անդամ չեն տալիս յուր մոր հետ տեսակցելու համար և անհատադ ուղարկում են 15 ամսով Ալժիր: Իսկ 1922 թ. հունվարին, յերբ ներման դեկրետ հրատարակվեց զինվորական կանոնադրքի վորոչ հոդվածներով դատապարտվածների վերաբերմամբ, 2500 դատապարտվածներից ամեն մեկին տասնորյա արձակուրդ տրվեց: Ինչո՞ւ յեն ուրեմն այսոր մերժում այն, ինչ վոր թույլ ելին տալիս յերեկ:

Բարձրագույն հրամանատարությունն այդ մարդկանց նկատում է միայն իբրև դատապարտվածներ: Տեսե՛ք, թե ի՛նչպես են նրանց ամի իջեցնում Որանում (Ալժիրում), շղթայակապ, շրջապատված ժանդարմներով ու զինվորներով՝ սվինները լիքը հրացաններին ամրացրած, և դուք կը համոզվեք, վոր ուղիղ է մեր հիմնական միտքը-այստեղ ամեն բան դեկավարողը դասակարգային արտելությունն է:

Որանի մոտ գտնվող Մերս-ել-Բեբիր ամրությունը հասնելուն պես տուգանավորներից խլում են ամեն բան

—սեպհական սպիտակեղենը, փողը, դրքերը: Նրանց նե-
շխանում են, հանգիստ չեն տալիս, անդադար ամեն տե-
սակ պաշտոնական պարտականություններ են դնում նը-
րանց վրա և առհասարակ ավելի լավ չեն վարվում, քան
կենտրոնական բանտերում, իսկ յերեկոները փակում են
պահնորդների պահպանության տակ:

Մերս-եւ Քերիրը սարսափելի տեղ է, բայց ավելի
վատերն էլ կան: Բանակներում կյանքը միանգամայն
անտանելի յե: Հարկադիր աշխատանքների դատապարտ-
ված և պատիժն արդեն կրած մի ընկեր ասում էր ինձ,
թե ինքը կը դերադասեր Կայեն վերադառնալ, քան բանել
Քենաձի ածխահանքերի տուգանավորների բաժնում:
Արդեն 1921 թ. վերջումն ու 1922 թ. սկզբում պայքար էր
մղվում այդ անիծված վայրի դեմ, վորտեղ Սև ծովի
շերումն ստացած նավազների մի խումբ ուղարկեցին,
անտարակույս՝ նրանցից ընդմիշտ ազատվելու համար:
Տուգանավորներն այնտեղ բանում են սոսկալի պայման-
ներում, ածուխի ցեխի մեջ, շարունակ հորի փլչելու
վտանգի տակ, վերահսկիչների մտրակների հարվածնե-
րն են ստանում և ակամա հարց են տալիս իրենց, թե ին-
չո՞ւ յեն իրենց նորից կրել տալիս մի անգամ արդեն կրած
պատիժը: Որանի ընդհանուր խորհրդումն այս մասին
հարցապնդումն արվեց պրեֆեկտին. բայց, ինչպես միշտ,
այս գործը կոցկեցին, խոսակցություններն այս մասին
դադարեցին, իսկ այն դժբաղդները, վոր հրաչքով կա-
րողացել են կենդանի դուրս պրծնել կենտրոնական բան-
տերից, Քենաձից վերադառնալուց հետո արյուն են թը-
քում, նրանց թոքերը բոլորովին ավերված են լինում,
յեթե միայն նրանք առհասարակ վերադառնում են այդ
դժոխքից:

ԱՖՐԻԿԱՅԻ ՏԱԺԱՆԱԿԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ավելի լավ ե մեռնել, քան վերադառնալ հարկադիր աշխատանքներ կատարելու:

Բուրժուական մամուլի մեջ նորերումս մի «տարորինակ դեպք» եր հիշատակված—յերկու զինվոր հետամուտ եյին մահու պատժի դատապարտվելու:

1923 թ. ոգոստոսի 26-ին Կաղարլանկայի (Ալժիր) զինվորական դատարանին ներկայանում են թեթև հետևազորի յերկու զինվոր, Պաղըվեն և Կոմբ, վորոնք տաժանակիր աշխատանքների եյին դատապարտված կանխամտածությամբ զինվորական գույք փչացնելու համար: Նրանք խոստովանվեցին, վոր «հանցանքը» գործել են վորոշ դիտավորությամբ, տաժանակիր աշխատանքից ազատվելու համար. գերադասել են մեկուսացած բանտարկված լինելը՝ այն տանջանքիցն ազատվելու նպատակով: Իսկ յերբ դատարանը, առանց պատժիչափը փոխելու, բավականացավ նրանով, վոր պատժի տաժանակամիջոցը յերկարացրեց, նրանք իրենց գլխարկը շարտեցին դատարանի նախագահ զնդապետի յերեսին և աղաղակեցին. «ավելի լավ ե մեռնել, քան վերադառնալ»:

Բուրժուական մամուլը, վոր մեր տերերի զգացմունքների ու մտքերի արժանավոր թարգմանն ե, ավելացնում ե. «Նրանց ցանկությունը կատարվեց»:

Յեվ վերջակետ: Վոչ մի մեկնություն. վոչ մի բացատրություն: Չախակողմյան լրագրները լուռ եյին. առաջիկա ընտրական պայքարը նրանց ավելի եր հետաքրքրում: Միայն հեղափոխական սինդիկալիստներն ու կոմունիստները բողոք հայտնեցին:

Ընթերցո՛ղ, լավ ըմբռնո՞ւմ եք արդյոք, թե ի՞նչ պի-

տի կրած լինի մարդ՝ մահ ցանկանալու վիճակին հասնե-
լու համար: Չե՞ վոր դիտակցությունը կիսով չափ
կորցրած խեղդվողն ել ինքնապահպանության բնազդը
չի կորցնում. ամեն բանից բռնում ե, ինչ վոր ձեռքի
տակն ե բնկնում, ինչ ել վոր լինի՝ ուզում ե ապրել: Յեւ
ահա Մարտիկոյում յերկու մարդ ձգտում են, պահան-
ջում են մահու պատիժ: «Ավելի լավ ե մեռնել, քան ուղ-
ղիչ բաժանմունքը վերադառնալ»: Յեւ չգիտեմ, թե ի՞նչ
հանցագործության համար եյին այդ յերկու մարդը «կա-
լանավորների գումարտակն» բնկել. չգիտեմ նույնպէս,
թե ինչի՞ համար եյին նրանց հարկադիր աշխատանքների
րի ուղարկել, բայց մի բան ինձ լավ հայտնի յե, վոր
ուղարկել, բայց մի բան ինձ լավ հայտնե յե, վոր բավա-
կան ե, վոր բանակատեղի հրամանատար սերժանտը ձեզ
մղձավանջ, վորից ազատվելու համար շատերը պատ-
րաստ են իրենց կյանքը զոհելու: Յեւ թող չառարկեն,
թե՝ այդ մի բացառիկ դեպք ե, թե՝ պատահում են յեն-
թասպաներ, վոր մարդակերպ անասուններ ե՛ն: Վո՛չ,
այդ մի ամբողջ սիստեմ ե, վոր ավելի բարձրագիւր մարդ-
կանց մտքի ծնունդն ե. այդ յենթասպաները միայն կույր
գործիք են, կատարողներն են աշխարհի հզորների չար
կամքի:

Պատերազմի յերկար տարիների ընթացքում, բուր-
ժուական մամուլը մեր ականջները տարավ գերմանա-
կան զորքի մեջ թագավորող դաժան ուժի մերկա-
ցումներով: Բայց մի անգամ Մերս-ել-Քերիը՝ ընկնող
այնպիսի տեսարաններ կարող ե տեսնել, վորոնց առաջ
նսեմանում են գերմանական կայսրի զորանոցների բոլոր
սարսափները:

Ճիշտ ե, զինվորական քրեական օրենսգրքում պատիժ
կա նախատեսված իրենց ստորագրյալներին զարկող
մեծավորների համար: Բայց այդ զարդի համար գրված
հոգվածները յերբեք չեն կիրարկվում: Սակայն ծեծը

պատժի պարզ և խիստ համեմուռնքն և միայն արգելա-
րանում փակելու, մի պատժի, վոր նշանակում և Մերս-
ել-Քերիր ամբողջյան հրամանատարն ըստ քմահաճո-
յից, մինչև անգամ առանց մեղադրյալին հարցաքննելու :
Նա առանձին սենյակում արգելափակվածներին, մին-
չև անգամ տաք կերակրից ու վերմակից զրկում և հենց
առաջին որվանից, և այն՝ հենց յուր իշխանությամբ :
Ազգականներին նամակ գրելը թույլ և տրվում միայն կի-
րակի օրերը. նամակները բաց են անում, կարդում են ու
վռնհացնում առանց պատճառները բացատրելու : Տու-
գանավորների սենյակները գարշահոտ են : Իսկ կանոնա-
գիրքն ասում և, վոր տուգանավորներն ազատ մարդիկ
են...

Մարտկկոյի փոխարքա մարչալ Լիոտեին ի՞նչ, վոր
յերկու զինվորի կը դնդակահարեն զին. դատարանի
նախագահի յերեսին գլխարկ չպրտելու համար. յերկուսն
ավել, յերկուսը պակաս—ի՞նչ կա վոր : Բայց Լիոտեն
թունդ հետադիմական և, մինչդեռ Ալթիրի փոխարքա
պարոն Ստեեզը արմատական և : Իբրև արմատական նա
չի թագցնում յուր ասելությունը դեպի բանվոր
դասակարգը, յերկյուզը նրանից, և յուր իսկական
զգացմունքները քողարկում և կեղծավոր ֆրազներով :
Բայց հարցը դնենք կտրուկ կերպով : Պարոն Ստեեզի գի-
տությամբ ու համաձայնությամբ չե՞ արդյոք, վոր նրան
ստորադրյալ բանտերումն ամեն ոք կատարվում են այս
զազանությունները : Գաղտնի կարգադրություններ չի՞
արել նա արդյոք, վորոնց արտահայտությունն էյին Ալ-
թիրի վոստիկանության կռակիտ բռնությունները մեր
նկատմամբ : Յես համարձակ դրական պատասխան եմ
տալիս :

Բանտերումն՝ իմ ազատվելու, պրոլետարիատի այդ
հաղթության լուրն ստացվելու օրը տոն և յեղել բան-
տարկվածների համար, և Ալթիրի խորքից ինձ այդ մա-

«ին տեղեկացնող ընկերն ավելացնում է. «Ոգնի՛ր մեզ ուրեմն, Անդրե՛, ոգնի՛ր մեզ: Մեր բոլորի հույսը քեզ վրա յէ»:

Ոգնե՞մ քեզ, ընկե՛ր: Այո՛, կաշխատեմ, վորքան ուժ ունիմ: Բայց յես քեզ ու՛քո վիճակակից յեղբայրներին ավելի մեծ ոգնությունն արած կը լինիմ, յեթե հեղափոխական սրբուհտարիատի մասին բոլոր ջանքս ուղղեմ խորտակելու ժամանակակից գարշելի իրավակարգը և նրա ավերակների վրա կանգնելու բանվորների և գյուղացիների մի Միջազգային Մեծ Հանրապետություն:

ՆԱՄԱԿՆԵՐ ՅԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հաստվածներ որագրից—16 ապրիլի 1919 թ.—10 սեպտեմբերի 1922 թ.)

ԳԱԼԱՅ—ՌՈՒՄԱՆԻԱ

19 ապրիլի, 8 ժ. առավոտ.—Այսօր, առավոտը, չորս զառութային գնդի զինվորներին փոխարինեցին սևամորթներով: Ակներև ե, վոր սպիտակամորթներն անվրստահելի գտնվեցին: Կարողացա՞ն արդյոք այս գիշերինձ պահպանող ընկերները կատարել իմ հանձնարարությունը: Յես անհանգիստ եմ ուսմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ բանվորների համար—ներանք ա՛յնքան անձնազոհ են: Յեթե մեր հարբերությունները հայտնվել են, ներանք կորած են. նրանց դարչելի կառավարությունը կ'ոգտվի այս պատրվակից, վորպեսզի կալանավորի և խոչտանգի նրանցից ամենաանձնվերներին...

20 ապրիլի, 4 ժ. ցերեկ.—Հենց նոր ինձ ամենաանամոթ խուզարկության յենթարկեցին: Խուզարկեցին բոլոր պատերը, հատակը, ցրվեցին «կարասիքը»—յերեք տախտակ և մի հին վերմակ, վոր իմ անկողինն են կազմում: Քանդեցին իմ վերարկուի աստառը և մինչև անդամ կոշիկներին ներբանները: Հիմարներ՛ր... Բայց չլինի՞ թե մեր ընկեր-զինվորներից մեկն ու մեկը ձերբակալված ե: Չլինի՞ թե ընկերներից մեկը նկատված ե ուսմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության լիազորի հետ զրույց անելիս: Միայն թե ներանք իմ հանձնարարությունը կատարած լինեյին...

21 ապրիլի, 9 ժ. առավոտ.—Պատուհանիցս մի զինվոր եմ տեսնում, վոր անցնում ե բակովը: Նրա բաճկոնի կոճակներն արձակած են, վոր մեր պայմանական լեղվով նշանակում ե. «Դուրս յեկ արտաքնոցը»: Կան-

չում եմ պահնորդին և իջնում եմ ցած, հրացաններով
դիմադրած սևամորթներով շրջապատված: Սանդուղքի վրա
ինձ հաջողվեց ձուլի կճեպի մեջ պահած մի տոմսակ բռնե-
լ: Այդ վոչ այլ ինչ է, բայց յեթե իմ վերջին նամակը,
վոր հանձնված է յեղել մի ռումանացի ընկերոջ և հիմա
վերադառնում է հետևյալ մակագրությամբ, վոր ար-
ված է տպագրական տառերով նամակի հակառակ յերե-
սին. «Յերեկ տոմսակդ ստացել ենք: Արիացի՛ր»: Յես գոհ
եմ և բաղդավոր: Նրանք հիմա գիտեն, թե ի՞նչպես եմ
յես ձերբակալված և ինչո՞ւ համար: Նախագգուշության
անհրաժեշտ միջոցներ նրանք անշուշտ արդեն ձեռք են
առել: Ամեն ինչ լավ է գնում:

22 ապրիլի, 7 ժ. առավոտ. — Իմ սենյակն է մտնում
մի սպա և կոպիտ կերպով ասում է. «Հագնվեցե՛ք և հե-
տևեցե՛ք ինձ»: Հնազանդվում եմ: Իմ կապույտ մահու-
դի զգեստի վրայից, վորով յես մրսում եմ, հագնում եմ
իմ սպայի հին բաձկոնը: Բայց գլխարկ չունեմ, վորովհե-
տև 18-ի գիշերը քցեցի մի զինվորի՝ իրեն տված հանձ-
նարարությունը կատարելը դյուրացնելու համար: Ուս-
տի մի ալպիական գտակ եմ գնում: Յեվ այսպես, գնում
ենք. ինձ շրջապատել է սևամորթների մի խմբակ, վո-
րոնց առաջին շարքի հրացանները սվիններով են: Իմ կող-
քին քայլում է մի սևամորթ կապրալ: Առաջից գնում է
հեծանիվ նստած մեկը, վոր յերևում է՝ ինձ բան է ուզում
ասել, վորովհետև հենց նոր ինձ աչքով արեց:

Մոտենում ենք քաղաքին: Ճանապարհին մեր դեմն
է դալիս մի պահակախումբ: Մեջտեղը մի խումբ բեսա-
րաբիացի դյուղացիք են, թվով մոտավորապես 50 հո-
դի, հագներին ցնցոտիներ, ռումանացի զինվորներով ու
ժանդարմներով շրջապատված: Նրանք յերկար ուշի ու-
շով ինձ են նայում. նրանց մոտիցն անցկենալիս՝ աղաղա-
կում եմ. «Բուլչեիկ եմ»: Ի՞նչպես են նայում ինձ: Մի
քանի արագ ձեռքի նշան. նրանցից մեկն աղաղակում է

իմ հասցեյին—«Ընկե՛ր»... և ելի մի քանի խոսք, վոր
յես չեմ հասկանում...

Վերջապես, ահա քաղաքը: Ուռա՛: Մեր ուղեցույ-
ցը, անտարակույս, դիտմամբ մեզ տանում է կուսակ-
ցության կոմիտեյի շենքի մոտովը. դռան վրա սև շրը-
ջագծերով կարմիր դրոշակ է ծածանում. դրոշակը բար-
ձրացրած է ի՛նձ համար: Յերկու բանվոր, վոր յերես-
ները պատուհանին արած ուշի ուշով դեպի փողոցն էյին
նայում, արագ դուրս են դալիս և գնում են դեպի նավա-
հանգիստը կողքի փոքրիկ փողոցովը: Յես շարունակում
եմ գնալ. մարդիկ խումբ-խումբ կանգ են առնում փո-
ղոցում, շվարած ու վրդովված: Յերեք Փրանսիացի սպա
աղաղակում են ինձ. «Անպիտա՛ն, քո դադաստանը կա-
նեն, ինչպես հարկն է. մեզ չես կարող խաբել»: Վերջա-
պես, հասնում ենք նավահանգիստը: «Պրտեռուս» ականա-
նավը կանգնած է կազմ ու պատրաստ: Նավապետը կա-
տաղած վազում է դեպի ինձ և հայհոյանքներ է թա-
փում գլխիս: Ամեն կողմից բանվորներ են դալիս, վոր
խմբվում են մի Փրանսիացի զինվորի շուրջը: Արդեն 30
հոգի յեն. մի յերեք բոպեյից հետո նրանց թիվը կը
կրկնապատկվի, վորովհետև ամեն կողմից վազելով դա-
լիս են: Մի քանի վայրկյան ևս—և յես փրկված եմ: Սա-
կայն սպաներն շտապում են, սևամորթ զինվորները ամ-
րացնում են սվինները. նավապետի հրամանով նրանցից
յերկուսն ինձ հրում են նավի տախտակամածի վրա. ինձ
խուզարկում են, ինձ փակում են: Ամեն ինչ վերջա-
պած է...

Այս ամբափակ արկղի մեջ, վորի մեջ եմ գտնվում
յես, լսում եմ ինտերնացիոնալի հեռվից հասնող ձայ-
ները... Հետո յես իմացա, վոր նավապետը կալանա-
վորել է յերգող զինվորներին:

«ՎԱԼԴԵԿ-ՌՈՒՍՍՈ» ՀԵԾԱՆԱՎԸ ՈՂԵՍՍԱՅԻ ՆԱ-
ՎԱԿԱՅԱՆՈՒՄ

23 ապրիլի, 10 ժ. առավոտ.—Կես ժամ է արդեն, վոր յես փակված եմ հաժանավի վրա. ի՛նչ պիտի անեն ինձ: Նավաստիները գրեթե բոլորն ել նորակոչներ են, վորոնց վստահել չի կարելի: Յեվ մարդ մի մտածի, վոր Ողեսսան այստեղից ընդամենն յերկու կիլոմետր է հեռու: Յես պարզ նշմարում չենքի վրա ծածանվող կարմիր գրոշակները:

5 ժամ կեսորից հետո.—Պահնորդները փոխվում են: Դուռը բացվում է: «Ընկե՛ր, ինձ նշանակել են քեզ պահապան: Ահա թուղթ ու մատիտ, գրի՛ր յես կը հանձնեմ ընկերներին»: Այս մարդը սուտ չի ասում, նրա դեմքն անկեղծություն է արտահայտում, սա լրտես չէ: Ուրեմն յես մենակ չեմ, անձանոթ բարեկամներ ունիմ. և յես գրում եմ ու գրում...

Կես գիշեր.—Լսում եմ, մեկը դադաղադուրի մոտենում է պատուհանիս: Բաց եմ անում: «Այս յես եմ, Լ., մեքենավար. ինձ բանտ են նստացրել պրոպագանդայի համար. յեկել եմ ձեռքդ սեղմելու. վստահ յեղիր ինձ վրա»: Ճշմարիտ, այս նավն ուղղակի հեղափոխված է:

24 ապրիլի, առավոտյան.—Տոմսակ եմ ստանում. «Ընկերներդ յեղբայրական վողջույն են ուղարկում քեզ և հայտնում են, վոր իրենք կ'ոգնեն քեզ վոր փախչես, յեթե չհաջողվի ապստամբություն գլուխ բերել»:

Յեվ նրանք իրավ վոր ապստամբվեցին, «Վալդեկ-Ռուսսոյի» այս պատվական նավաղները: Նրանք կատարեցին իրենց խոստումը ապրիլի 27-ին ու 28-ին: Բայց, ավա՛ղ, ինձ տարան ապստամբությունից մի ժամ առաջ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒ-
ԹՅԱՆ ԱՐԳԵԼԱՐԱՆԸ

14 մայիսի.—Ապրիլի 28-ից յես նստած եմ արդե-

լարանում: Քարե պատերը մի մետր հաստություն ունին: Փոքրիկ պատուհանը կրկնակի վանդակով է պատած: Մի խոտկուռ, մի շիշ ջուր և մի տուփ պաքսիմատ — ահա այն բոլորն, ինչ վոր կա իմ տրամադրության տակ իմ կարիքները հոգալու համար: Յերեկ յերկաթե ծանր դռանը, վոր առաջ ել փակած եր կողպեքով ու մանդիլով, մի հաստ փակ ել ավելացրին: Տաճիկ պահնորդիցն իմացա, վոր ՏՀ հետևակ գնդի 7 վաշտի զինվորներից մեկը, վորին ինձ պահապան եյին նշանակել, բանտարկված է նրա համար, վոր գետին է գցել յուր գենքը, հրացանն ու կեպին, յերբ վոր հայտնում են իրեն, թե նա պիտի լինի իմ պահապանը:

ՏՈՒԼՈՆ, ԿԱԼԱՆԱՏՈՒՆ

30 հուլիսի.—Այսօր գիշերը իմ սենյակում գտնվող առժանակիր աշխատանքների դատապարտվածները պատրաստվում են փախչելու: Յես խոստացել եմ իմ աջակցությունը: Սակայն իրավունք ունի՞մ յես արդյոք փախչելու: Կարո՞ղ եմ յես արդյոք թաղնվել այն ժամանակ, յերբ իմ կրտսեր ընկերները, նավաստիները, դատի պիտի հանձնվեն. կարո՞ղ եմ յես առաջուց նրանց զինվորական ռեժիմի դատան ճնշումներին դատապարտել: Ի՞նչ անեմ արդյոք:

Ամբողջ օրը քննում ենք այս խնդիրը ընկեր Ռ.—ի հետ: Ժամի չորսից կես անց մեզ տանում են ընդհանուր սենյակը և, ըստ սովորության, մենք հանում ենք մեր շորերը միջանցքում, վորպեսզի սենյակ մտնենք մերկ, շապիկներն ձեռներիս բռնած: Մեզ հաջողվեց հետներս մի սղոց անցկացնել, վոր ահագին դժվարություններով եյինք ձեռք բերել: Վերցնում եմ սղոցը, առաջուց հայտնելով ընկերներիս. «Յես ձեզ խոստացել եմ ոգնել, և կ'ոգնեմ, բայց ինքս ձեզ հետ փախչել չեմ ուզում»: Զայրույթը սրտումս վճռեցի մնալ:

Սղոցով կտրում եմ մի մահճակալից մի տափակ յերկաթի շերտ, և այդ գործիքովն սկսում ենք քանդել ներսի պատը: Մեկը մյուսի հետևից մերկացնում ենք մի շարք աղյուս և դուրս ենք քցում: Մի հարկ մեղանից ցած մեր տակին տաժանակիր աշխատանքներից փախած և նորից բռնված մի ընկեր պահապան է կանգնած. վռտները շղթայած նա անդադար հետ ու առաջ է գնում, քանի վոր մեզ վտանգ չի սպառնում, բայց հենց վոր վերակացուններից մեկը սանդուղքով վեր է բարձրանում, նա անշարժ մնում է կանգնած: Նրա շղթաների շաչյունի դադարելը մեզ համար վտանգի նշան է, և մեր աշխատանքը վայրկենաբար կանգ է առնում:

Յերեկոյան ժամի 10-ի մոտ յերեք շարք աղյուս արդեն հանված է պատիցը, և մի լայն ձեղք է բացվում: Ընկերներս մեկը մյուսի հետևից սեղմում են ձեռքս ու հեռանում են, փոքր ինչ հուզված: Ժամեր են անցնում. մենք սպասում ենք տազնապով: Վերջապես գիշերվա ժամի մեկին վերակացուն անց է կենում միջանցքովը: Հեռուից հասնում է մեզ մաքառման ձայն, վոր շուտով դադարում է. մի բռնվում վերակացուն բռնում են, կապում և բանալիները խլում: Առանց ժամանակ կորցնելու բանտարկյալները բաց են անում սենյակների դռները, արագ իջնում են ներքև և փողոց են դուրս գալիս: Նրանք ազատ են, մինչդեռ վերակացուն, գետնին պառկած, շունչը կտրվում է և իզուր ջանք է անում կապանքիցն ազատվելու: Յես չեմ ամսոսում, վոր մնացի...

ՆԻՄԻ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆԸ»

1920 թ., փետրվար.—Տաժանակիր աշխատանքների դատապարտվածների վերջին խմբումն է ընկ. Անդոր-կան, ինժեներ-մեքենագետ, վոր Սեգեդինի խորհրդի պատվիրակ է յեղել 1919 թ. հունգարական հեղափոխու-

թյան ժամանակ: Նա դատապարտված է տաժանակիր աշխատանքների ցմահ «թշնամու հետ հարաբերություն ունենալու և Ֆրանսիական զորքի մեջ հեղափոխական պրոպագանդ մղելու համար»: Ի՞նչ խայտառակություն: Նա ավտորիտի չէ, ուրեմն Ֆրանսիայի հետ պատերազմող մի յերկրի հպատակ. յուր ձերբակալվելու պահուն նա վոչ մի բառ չի խմացել Ֆրանսերեն. ի՞նչպես կարող եր ուրեմն նա պրոպագանդ մղել Ֆրանսիական զորքի մեջ: Նրա հետ յեկել են նրա հայրենակիցներից ութ հոգի, հունգարական կարմիր բանակի նախկին զինվորներ: Սյա զգալի կերպով ավելացնում է մեր հեղափոխական կորիզի թիվը. և յեթե պրոլետարիատի խոշոր շարժում տեղի ունենալու լինի, ինչպես վոր սպասվում է, մենք փորձ կ'անենք ուժով դուրս պրծնելու բանտից այն ժամանակ, յերբ զորքերն ու վոստիկանությունը զբաղված կը լինեն ապստամբների դեմ կռվելու՝ բանտի պատերից դուրս:

Հունիս.—Ինձ հաջողվեց բանտից դուրս ուղարկել իմ բարեկամ Իվանի (յես դիտմամբ նրա իսկական անունը չեմ տալիս) նամակը, վոր նույնպես յուր դասակարգային պարտքը կատարելու համար է դատապարտված: Յերբ յես նրան հայտնեցի, վոր այդ նամակը, վոր պիտի կարդացվի Բելոռուսիայի մի աղքատիկ խրճիթում, անարդել տեղ կը հասնի, նա յերեխայի նման ուրախացավ:

13 հոկտեմբերի.—Անցյալ գիշեր Նիմի բանվորները բազմությամբ դուրս եյին յեկել փողոց և ընդհանուր ներումն եյին պահանջում: Մի ամբողջ ժամ մեր ականջին հասնող հեղափոխական յերգերը հույս եյին զարթնեցնում մեր սրտերում:

28 հոկտեմբերի.—Վատ լուրեր են ստացված. ասում են, թե Վրանդելը գրավել է ամբողջ Հարավային Ռուսաստանը և թե Խորհրդային Հանրապետություննե-

քը կործանվելու վրա յեն: Ընկերներն ամեն բոպե հար-
ցնում են ինձանից, ճի՞շտ են արդյոք այդ լուրերը. «Յե-
թե խորհուրդները խորտակվեն, մենք բոլորս կորած
ենք», —ասաց ինձ մի ընկեր, գյուղացի զինվոր, վոր
հրաժարվել էր բանվորների վրա հրացան արձակելուց
Պերսոնում և դրա համար դատապարտված էր տաժանա-
կիր աշխատանքների 10 տարով:

29 հոկտեմբերի. — Հոկտեմբերի 12-ի գրույցի հե-
տևանքով մեր բոլոր նավազ ընկերներին տարել են և
չորս-չորս տեղավորել Ֆրանսիայի ուրիշ կենտրոնական
բանտերում: Իշխանությունը վախենում է թե նրանից,
վոր մեզ կարող է ազատել ժողովրդի զայրույթը և թե
նրանից, վոր մեր սերտ համերաշխությունը բանտի ներ-
քին կարգապահությունը կարող է խախտել:

ՆԻՑՅԱ-ՄԱՐՍԵՅԼ

1 հունվարի, 1921 թ. — Նոյեմբերի 17-իցն սկսած յես
բանտի առանձնարանումն եմ: Ինչո՞ւ: Ինձ վոչ մի շար-
ժառիթ հայտնեցին. այսպես է նախարարության հրա-
մանը: Ուտել եմ ուղում: Յես շարունակ քաղցած եմ և
բացի դրանից՝ մրսում եմ: Սակայն գոհ եմ: Նիմից մեկ-
նելուս նախորդ որն իմացա, վոր Վրանդելը ջարդված է,
և յես կարողացա հայտնել իվանին, թե հեղափոխու-
թյունը փրկված է: Ի՞նչ յերջանիկ եմ յես: Ինձ պահում
են բանտում ու խոշտանգում են, բայց հետո ի՞նչ: Ի՞նչ
պիտի կարողանան անել: Հեղափոխությունն այնուամե-
նայնիս վ հաղթանակում է:

Մարտի, 31 հունվարի, ժ. 10 առավոտ. — Յերեկ
դատապարտյալների մի խմբի հետ մեկնեցի Նիցցայից:
24 ժամ պիտի մնան այս Սեն-Պիեռ դարչելի բանտումն և,
ի հարկե, յես դարձյալ առանձնարան ընկա: Հանկարծ
բացվում է դռան վերին մասը. «Ա՛ռ, ընկե՛ր, կե՛ր»: Մե-
կի ձեռքն ինձ մի աման կարտոֆիլ է մեկնում, և դուռը

նորից փակվում է: Փոքր ինչ հետո նորից լսում եմ. «Ընկե՛ր, խմի՛ր»: Յեվ մի փոքր դինի յեմ ստանում:

Կեսուր. — Վերակացուները փոխվում են: Նորից դրան վերին մասը բացվում է. «Մի՛ վհատիր, ընկե՛ր, արիացի՛ր: Տուրի համաժողովը ձայների ահադին մեծամասնությամբ վորոշել է միանալ 3-րդ Ինտերնացիոնալին: Մենք կը փորձենք իմաց տալ բանտից դուրս, վոր դու այստեղ ես»...

ՏՈՒԱՌ. ՏԱԺԱՆԱԿԻՐ ԲԱՆՏ. 1921 թ.

12 փետրվարի. — Ամսի 2-իցն յես այս բանտումն եմ, առաջվա պես առանձնարանում: Յուրտ ե ու խոնավ, և յես ինձ սաստիկ հոգնած ու ջարդված եմ զգում: Յերեկ ինձ մի տոմսակ տվին, վորիցն իմացա, վոր իմ ընկեր նավաստիներից չորսը նույնպես այստեղ են, մնացած կալանավորներիցն առանձնացրած: Յես պատասխանեցի, մի քանի խոսք քորոցի գլխով խաղխղելով մի յուղոտված, հին թղթի կտորի վրա: Ստացե՞լ են արդյոք պատասխանս և կարողացե՞լ են արդյոք կարդալ: — Իմ կողքի սենյակում մեկին ծեծում են: Լսում եմ նրա ճիչերը. «Ողհեցե՛ք»: Իմ սենյակից վեր, պատշգամբում ման յեկող պահնորդն իջավ ցած, վոր իմանա, թե ի՛նչ է պատահել:

25 մարտի. — Մեր միջանցքում ամեն ոք մարդ են ծեծում: Բանտապետի ոգնականը վերակացուների ոգնությամբ ծեծում է մեր ընկերներին, կրունկներով ու բռնունցքներով հարվածներ հասցնելով:

31 մարտի. — Այսուր յես դուրս յեկա առանձնարանից վորեվե հանձնառությունից ազատ: Մերժեցի խոստում տալ հրաժարվելու ազիտացիայից — թե ներքին և թե արտաքին: Այնու ամենայնիվ ինձ ազատեցին, թեպետ և ինձ ստիպում են առաջվա պես ուտել և քնել առանձնարանում, վորպեսզի վոչ մի հաղորդակցություն չունե-

նամ մյուս բանտարկյալներին հետ: Բայց և այնպես յես
կարողացա ծանոթանալ մի ուրիշ ընկերոջ հետ, Սալոնի-
կի զորավար Բից, վոր նույնպես յուր պարտքն է կատարել:
Արտասովալից աչքերով նա ձեռքս սեղմեց: Խեղճ տղա:
Պիտի տեսնե նա արգյոք յերբ և իցե յուր հայրենի դաշ-
տերը:

ԿԼԵՐՎՈ—1922 թ.

18 ոգոստոսի.—Տաժանակիր աշխատանքներն ինձ
համար փոխարինեցին բերդարդելությամբ, և ինձ տե-
ղափոխեցին այս զգվելի պետական բանտը, վորի շրջա-
գիծը հասնում է 14 կիլոմետրի: Այսոր առավոտն ար-
դեն ստիպված յեղա ճանապարհորդելու գեպի վարչական
տրիբունալը նրա համար, վոր յես յերեք ընկեր-նավագի
հայտնել էյի ամեն բան, ինչ վոր ինձ հայտնի յեր քա-
ղաքական դրության մասին և ստացել էյի նրանցից մի
սպիտակ հաց և մի քիչ մարգարին, վոր յես իսկույն կե-
րա, վորովհետեւ շատ քաղցած էյի 21 որ պահակներով
ճանապարհորդելուց հետո: Բանտապետը վողբերգական
յեղանակով գոռաց. «Այստեղ ել չեք կարողանա անել այն,
ինչ վոր Սե ծովումն էյիք անում»: Նա իմ ընկերներին
բանտարկություն նշանակեց առանձնարանում 30 որ,
իսկ ինձ՝ հանդիմանություն և հարկադիր աշխատանք-
ներ: Բայց իմ բանտը մտնելու հենց առաջին որն ինձ
սպառնում էյին շղթաներ, արգելարան և ժամանակա-
կից ինքվիդիցիայի տանջանքների մյուս գործիքները:

4 հունվարի.—Բանտապետը, վոր Փաշիստ է յուր հա-
մոզմունքներով, մի փոքր խրատ ստացավ: Առանձնա-
րանների շենքումը պատելիս նա մի հեզնական նկատո-
ղություն է անում ընկեր-նավագներից մեկին, վոր դա-
տապարտված է բանտարկության ցմահ՝ մի լրտես կա-
լանավորի սպառնալիք կարդալու համար: «Բարեբախ-
տաբար մենք ավելի ուժեղ ենք», —ասում է այդ դահի-

ճը:—«Բայց այդ միշտ չի շարունակվի»,—պատասխանում է ընկերը:

22 մայիսի.—Անհաջողությունները հալածում են մեզ: Այն բոլոր ընկերները, վոր դրսի աշխարհի հետ հարաբերություն ունենալու համար մեր միջնորդներն էին, մեկ մեկու հետևից կալանավորված և ծածուկ ուղարկված են առանձնարանները: Նրանց ուտելիքը կրճատել են մինչև 600 դրամ հաց ուրական, մինչև վոր պատմեն ամեն բան, ինչ վոր իրենց հայտնի չէ: Ի լրումն դժբախտության՝ նրանցից մեկիցը խլել են մի տոմսակ, վոր ժամանակ չեր ունեցել վոչնչացնելու: Այդ մի ավելորդ փաստ պիտի լինի իմ ամբաստանողների ձեռքին: Յեվ դեռ կան ընկերներ, վոր կարծում են, թե կտրավարությունը կարող է մեզ ազատել, յեթե ժողովրդական ցույցերը դադարեն:

10 սեպտեմբերի.—Վերջին վեց որվա ընթացքում զորք ու ժանդարմերիա յեն բերում հին բանտի շենքի մոտ: Դեպարտամենտի կոմունիստական Ֆեդերացիան միտինգ է նշանակել հենց բանտի պարիսպների տակ: Բոլոր ճանապարհները կլեզվոյից 9 կիլոմետր հեռավորության վրա կտրված են: Բանտի մեջ բանտապետը շարունակ կատաղած է: Նրա անձնական հսկողությամբ խուղարկում են արտաքնոցները, արհեստանոցները, սենյակները. նա դենք է վորոնում, վոր իբր թե մենք թաղցրել ենք: Այս դաժան դահիճը իսկապես յերկուդից խելքը կորցրած վախկոտի մեկն է: Զորքի հրամանատարությունը հանձնված է ընդհանուր շտաբի ղեկավարներին: Այն բոլոր ընկերները, վորոնց մասին կատկած կա, թե ինձ հետ լավ հարաբերություններ ունին, չնչին պատրվակներով փակված են առանձնարաններում:

Ն Ա Մ Ա Կ

ՆԱՎԱԶՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

25 ապրիլի 1920 թ.

Ընկերներ.

Կրկին անգամ վողջուհուամ ենք ձեզ ձեր ցույց տված յեռանդուն գործունեյության համար, վորի արձագանքները, թեպետև թուլացած, հասան մեզ: Կրկին անգամ հայտնում եմք ձեզ մեր բացարձակ վստահությունը: Թեև մենք արտաքին աշխարհի անցքերից քիչ տեղեկություն ունենք, սակայն ոգտակար եմք համարում ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալ փաստերի վրա, հուսալով, վոր այս ցուցմունքները կ'ոգնեն ձեզ մեր շահերը պաշտպանելիս:

1. Մեր վիճակի բարվոքումը:—Զինվորական դատարանների վճիռներով ծառայական կամ քաղաքական արարքների համար դատապարտվածները բանտարկված են քրեական հանցագործների հետ միասին: Այն ինչ, հարկադիր աշխատանքները մի պատիժ են, վոր անպատճառ կապված չեն բանտարկության կամ բերդարգելության հետ: Կենտրոնական տաժանակիր բանտում նույն կարգ ու կանոնն է տիրում, ինչ վոր հասարակ բանտերումն է. վեր են կենում 6 ժ. 30 րոպե, պառկում են 18 ժ. 45 րոպե: Ամբողջ որն անց են կացնում արհեստանոցներում, բացի 9 ժ. մինչև 9 ժ. 20 րոպե, 16 ժամ մինչև 16 ժ. 30 ր. (ճաշ և ընթրիք), 9 ժ. 30 ր. մինչև 10 ժ. և 16 ժ. 30 ր. մինչև 17 ժամը (բաղում քայլելը): Վորևե խոսակցություն խիստ արգելված է: Ուտելիքը շատ աղքատիկ, միայն այնքան, վոր սովից չմեռնեն: Բանտի կրպակում կարելի չէ լրացուցիչ ուտելիք գնել սեփական փողով. բանտարկյալն ստանում է տանիցը հինգ Ֆրանկ ամսական և յուր աշխատավարձի յերեք տասներորդականի կեսը, վոր տմիսն անում է առառավելն չորսից

հինգ Փրանկ: Այն ձեռնարկուները, վորոնց համար մենք աշխատում ենք, մեր աշխատանքի պատուհների գները բարձրացնում են, բայց աշխատավարձի սակացույցը մնում է անփոփոխ: Վորովհետեւ բանտի կրպակի ապրանքների գները աճում են պրոդրեսսիվ կերպով, նամականիշները տասը սանտիմի տեղ հիմա արժեն 25 սանտիմ, սապոնն էլ վճարով են տալիս, ուստի զժվարությամբ ենք կարողանում մեզ համար անհրաժեշտ ուսուլիք գնել:

Մեր այժմյան դրության ցանկալի բարվոքումները հետեյալները պիտի լինին.

1. Զինվորական դատարանների վճիռներով պատիժ կրողներին, թե՛ հաշկադիր աշխատանքների և թե՛ բանտարկության դատապարտվածներին առանձնացնել քրեական հանցագործներից: Բեռլինյան դատապարտվածներին բոլորովին անջատել մյուսներից և նրանց նկատմամբ նրանց համար որենքով սահմանված ուժիմը կիրարկելու (աշխատավարձի 7 10-երորդականի խոսելու իրավունք): Աշխատավարձի սակացույցի վերաբննությունը և ավելացնելը սննդամթերքների գների համեմատական չափով: Ագիտացիա այն ուղղությամբ, վոր բանտարկյալներն աշխատեն պետության համար և վոչ թե սպեկուլյանտներ:

2. Ագիտացիա ընդհանուր ներման համար: Մենք կատարյալ հավանություն ենք տալիս ձեր այդ նպատակով արած քայլերին և այն տվյալներին, վորոնց վրա դուք հենվում եք:

3. Գործերի վերաբննությունը: Յեթե մեզ ներումն չչնորհվի, վորի մասին կարելի չե վախենալ, թե այդպես էլ կը լինի, պայքարը շարունակելու գեղեցիկ միջոց կարող է լինել բոլոր դատական գործերի վերաբննությունը: Զինվորական դատարանի ամեն մի նիստ պրոսպեանդայի շատ ավելի իրական միջոց է, քան բոլոր թու-

ցիւկները, բրոշյութներն աւ միտինգները, վոր արդեն
 իրենց դերը կատարել են ձեր, կազմակերպողներիդ շնոր-
 հիւ։ Անհրաժեշտ է հետամուտ լինել, վոր զինվորական
 դատարանի նիստերը դռնբաց լինեն։ Պետք է նույնպէս
 միջոցներ ձեռք առնել հնարավոր օրստրուկցիայի առաջն
 առնելու համար, վոր արտահայտվում է նրանով, վոր
 դատարանի դահլիճը լցվում է բացառապէս սպաներով
 և իսկական ժողովրդի համար տեղ չի մնում։ Հասկանա-
 լի յե, վոր անհրաժեշտ է ձեռք բերել և պահել դատական
 նիստերի լիակատար օրձանագրությունները, վորով-
 հետե վկաներից շատերը տվել են ու փոխել են իրենց
 վկայությունները սպաների ուղղակի թե անուղղակի
 ճնշման տակ։ Սրա դեմ վորոշ միջոցներ պետք է ձեռք
 առնել և այդ նպատակով վորքան կարելի յե լայն չափե-
 րով վկաներին ուղղված կոչեր տարածել։ Վերջապէս
 «Ֆրանսիայի» և «Վալդէկի» նախաստիների դործի հա-
 մար պետք է վերապէս վկա կանչել ընկ. Մարիշին։ Թերեւ
 ցանկալի կը լիներ, վոր դատարանի նիստերը տեղի ու-
 նենային խոշոր զրահակիր նավերից մեկի վրա, մարտկո-
 ցի վրա, կամ, յեթե վորոշված լինի դործը քննել ցամա-
 քի վրա, այդ դեպքում՝ քաղաքացիական դատարանի
 շէնքում, բացի սրանից՝ զինարանի բանվորներին ու
 նախաստորմի նախաստիներին կատարյալ հնարավորու-
 թյուն պիտի տրվի ներկա լինելու դործի քննության ժա-
 մանակ։ Մեզ ցանկալի յե թվում նույնպէս, վոր դատա-
 րանի նստաշրջանները հետեւեյին մեկը՝ մյուսին 6 կամ 10
 օրյա ընդհատումներով, թե նրա համար, վոր պաշտ-
 պանները ժամանակ ունենային հանդատանալու և թե նրա
 համար, վոր դործերի քննությունը տվելի յերկար ժա-
 մանակ տևեր։ Կարևոր է նաև առանձին դործերի ուղղ-
 դրության կարգը։ Մեր կարծիքով, մեզ համար ցանկա-
 լի կարգը հետեյալն է. «Տուառեզ», «Դիդերո», «Ֆրան-
 սիա», «Պրովանս», «Վալդէկ-Ռուսսո», «Պրոտեուս»։

Խիստ ցանկալի յե, վոր պաշտպանները բոլորն ել սոցիալ-
լիստական կուսակցության անդամ լինեյին և ունենա-
յին ձեր հավանությունը, վորպէսզի չճնշեյին ու չխարե-
յին մեղադրյալներին:

4. Փախուստ. — Զինվորական դատարանները գոր-
ծերը վերաքննելիս, հարկաւ, բոլոր մեղադրյալներին
չեն արդարացնի: Այս փափուկ խնդրի առթիւ մենք ձեզ
գործելու կատարյալ ազատություն ենք տալիս: Սակայն
մենք առաջուց կ'ուզեյինք իմանալ, թե դուք ի՞նչ եք մտա-
ծում այս մասին, և կրկնում ենք այն, ինչ վոր դրել ենք
ձեզ մարտի վերջին. այստեղ, բանտի ներսում, առանց
դրսի ոգնության բոլորովին չի կարելի վորևէ բան անել:
Բանտարկյալներից շատերը յերկշուտ են և մատնիչ, մին-
չև անգամ հարկադիր աշխատանքների դատապարտ-
վածների մեջ: Յեթե մեր գործերի վերաքննությունը
տեղի ունենալու լինի, մինչև նոր դատաքննությունը
վոչինչ պետք չե ձեռնարկել, վորովհետեւ մեզ ղեկավա-
րողը բացառապէս գործի ոգուտը պիտի լինի:

Սիրելի՛ բարեկամներ, ազատվելուց հետո մենք կը
կազմենք այն ահագին ամբաստանագիրը, վորի հիման
վրա կը հաջողվի մեղավորներին դատապարտել տալ և
խորտակել ռեակցիայի վերջին պատվարը—զինվորական
նավատորմիդը, հանձին յուր դանազան կարգի սպայու-
թյան կազմի, այդ քաղցկեղը, վոր մաշում է ժողովրդի
որդանիդը և սնվում է նրա լավագույն զավակների ա-
րյունով: Այս տողերը գրելիս, մենք հիշում ենք վոչ մի-
այն այն 14 դժբաղդներին, վորոնք զնտակահարվեցին
Սևաստոպոլում ուս կանանց և յերեխաների հետ միա-
սին, այլ և նրանց, վորոնք այսօր հանգչում են
ծովի խորքում, մեծավորների անրնդունակության
կամ անմտության շնորհիւ:

Հավաստելով մեր կատարյալ վստահությունը ձեզ
վրա, մենք հանգիստ, բայց անհամբերությամբ սպա-

սուժ ենք այն վայրկենին, յերբ յուր ուշքը վերջապես
գիտակցած պրոլետարիատը կը կանչէ մեզ «վերջին վրձ-
նական կռիւի» համար:

Սե ծովի նավախմբի 20 դատապարտված նավաստի-
ների կողմից, վորոնք բանտարկված են Նիմի կենտրո-
նական բանտում—Ֆոնս՝ «Տուառեգից», Գյուլուե՝
«Ֆրանսիայից», Մաուա՝ «Պրոսեուսից», Ռիկաու՝
«Ֆրանսիայից»:

Հ. Գ. 2 մայիսի.—Մենք հենց նոր իմացանք, վոր դուք
կրկնապատկված յեռանդով մղում եք ձեր պրոպագան-
դան: Այդ մեզ ուրախացնում է մանավանդ այն պատճա-
ռով, վոր բանտի վարչությունն անխնա յե մեր նկատ-
մամբ: Բրունետտին («Տուառեգից») նոր փակված է ա-
ռանձնարանում հաց ու ջուր միայն ստանալու պայմա-
նով 16 որ ժամանակով, իսկ Տրուվեն («Պրովանսից») 6
որով, ամենաչնչին առթիւ: Այս պատիժները նշանակել
է բանտապետը, վոչ մի տարբերություն չի դնում մե-
րոնցից մեկի ակամա զանցանքի և ուրիշ կարգի կալա-
նավորների կանխամտածությամբ դործածի մեջ: Այս,
ի հարկե, չեր կարող լինել, յեթե մեզ առանձին պահե-
լին: Յերեկ, մայիսի 1-ին, բժիշկն ընդունելություն
չունեցավ՝ խուսափելու համար այն բանից, վոր մենք
չլինի թե բոլորս հիվանդ ձեանայինք իբրեւ ցույց: Բայց
հիվանդների թիւը սահմանափակված է վարչական
կարգով: Այսպես, որինակ, հարկադիր աշխատանքների
դատապարտված 400 հոգու համար միայն 18 տեղ կա
հիվանդանոցում: այնպես վոր, յերբ վոր հիվանդանոց է
մտնում տասնեկններորդը, այնտեղից հանում են նրան,
վոր ավելի քիչ հիվանդ է: Ահա թե ինչպես են վարվում
մեզ հետ: Լավ կը լիներ հրատարակել մերոնց անվանա-
կան ցանկը այնտեղ, վորտեղ վոր նրանք բանտարկված
են. սակայն ինչ ել վոր դուք անելու լինեք, մենք ամեն
բանում հավատում ենք ձեզ: Թեպետ մեր մեջ կան շրջա-

պատու պայմանների ազդեցութեանը յենթարկվողներ
ու վեհերոտներ, բայց ընդհանուր ուժամբ ժիր ենք ու
հուսով լի:

Մեր սրտագին շնորհակալութեանը հայանելով ձեզ,
յեղբայրական վողջույն ենք ուղարկում բոլորիդ:

Բանտարկված ընկերների անունից՝

ԱՆԴՐԵ ՄԱՐՏԻ

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ


ԸՆԿ. Մարտին ԽՍՀՄ մեջ

Ֆրանսիայի բանվոր դատակարգի լայն մասսաների
ճնշման տակ Պուանկարեյի կառավարութեանն ստիպ-
ված յեղավ ազատել ընկ. Մարտին: Յուր ազատվելու
վայրկենիցն սկսած ընկ. Մարտին անդուլ աշխատում է
հոգուտ քաղաքական բանտարկյալների ընդհանուր ներ-
ման: Այս տարվա հոկտեմբերի 12-ին ընկ. Մարտին յե-
կավ ԽՍՀՄ, վորի բանվոր դատակարգը միշտ ուշադրու-
թյամբ հետևում էր յուր զինակցի հերոսական գործու-
նեյութանը:

Ստորև գետեղում ենք մի հատված, «Սպիտակ տե-
ոորը Ֆրանսիայում» հոգվածից, վոր գրել է նա «Պրավ-
դա»-ի համար:

Ահա 20 տարի յե արդեն, վոր Ֆրանսիական պրուլե-
տարիատը պայքար է մղում զինվորական տաժանակիր
աշխատանքների դեմ, բայց և վոչ մեկը միմյանց հաջոր-
դող դեմոկրատ նախարարներից ձեռք չի տվել այս սոս-
կալի հիմնարկութեանը, վոր միակն է աշխարհի յերե-
սին: Յեվ հենց այս աֆրիկյան տաժանակիր աշխատանք-
ներին են ուղարկվում նրանք, վոր համարձակվել են հե-
ղափոխական պրոպագանդ մղել բանակի և նավատորմի
մեջ:

Մ Ո Պ Ր-ը սպիտակ սենյակից զինված են և ոգնելու հա-




մար յուր մղած պայքարի ընթացքում, ամէլի ու ամէլի ուշադրութիւն պիտի դարձնէ Ֆրանսիական կառավարութեան հալածանքներին: Իմ հիշատակած մի քանի դեպքերի հետ միաժամանակ կան շատ ուրիշները, վոր դեռ անհայտ են: Թեպէտ յետ Ֆրանսիական պարլամենտի անդամ եմ, բայց արդարադատութեան նախարարը վոչ մի անգամ չի պատասխանել իմ խնդրին—թույլ տալ ինձ բանտերն այցելել, անշուշտ վախենալով, վոր յետ աշխտեղ ինձ դեռ անհայտ զոհեր կարող եմ գտնել:

Զինվորական տաժանակիր աշխատանքների վոչընչացումը, վոր Ֆրանսիական պրոլետարիատը չկարողացավ անել տալ յուր 20-ամյա պայքարի ընթացքում, կիրականանա, յերեւի, ՄՈՊՐ-ի բարեկամների ջանքերի շնորհիւ, մանավանդ նրա ուսւ անդամների: Ռուսաստանում, ի միջի այլոց, բանվորներ կան, վոր պատերազմի ժամանակ զինվոր են յեղել Ֆրանսիայում: Նրանք կարող են իմանալ, թե ի՞նչ յեղանակներով ե մաքառում Ֆրանսիական բուրժուազիան պրոլետարիատի դեմ:

Յետ հավատացած եմ, վոր ուսւ պրոլետարիատը և բանվորները, վորոնցից շատերը ցարական բանտի տանջանքներն են տեսել, մասսայորեն կը միանան ՄՈՊՐ-ին և հզոր ոգնութիւն ցույց կը տան իրենց յեղբայր-բանվորներին, վորոնք տառապում են ամբողջ աշխարհի բանտերում, վորոնց թվում և «դերազանցորեն դեմոկրատական» Ֆրանսիայի բանտերում: Այն վստահութիւն-թիւնը, վոր միլիոնավոր բանվորներ մտածում են նրանց մասին, նրանց ընտանիքների մասին, ուղարկում են նրանց իրենց նյութական և բարոյական ոգնութիւններ, կենդանի թաղված կալանավորներին հնարավորութիւն կը տա դիմանալու իրենց տառապանքներին՝ ազատարար Հեղափոխութեան ակնկալութեամբ:

(«Պրավդա», 18 հոկտեմբեր 1924 թ.)



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003794

A ^{II} 23248

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

[224.]